Մարդկանց մեծ մասը կարծում է, որ Փաշինյանի հեռացումը չունի այլընտրանք: Եթե մենք չենք ուզում, որ մեր ապագան կանխորոշի Ալիեւի կամակատարը, ապա հունիսի 7-ին նրա հեռացումը պետք է այլընտրանք չունենա: Այսօրվա միջադեպի ժամանակ Փաշինյանի թիրախում հայտնված կինն արտահայտեց արժանապատիվ հայ մարդու սրտի խոսքը:

Կարդացեք՝ էջ 4

Ընկոլին ընտրելու 4 վարիանտ կա,- այսօր ինձ բացատրեց տաքսու վարորդը,- մեկը՝ որ գնաս, իրեն ընտրես, երկրորդը՝ որ գնաս, քվեաթերթիկն անվավերացնես՝ փչացնես, երրորդը՝ որ չգնաս ընտրության, պառկես դիվանին ու սաղից զզվես: Եվ չորրորդը՝ որ ընտրես այն մանրմունր ընդդիմադիրներից որեւէ մեկին՝ ձայնդ փոշիացնես:

Կարդացեք՝ էջ 5

Քարոզարշավի առաջին 10 օրը կարելի է գնահատել որպես բացահայտման 10-օրյակ: Ընդդիմությունը, որի ակտիվությունը չէր գոհացնում՝ բավարար չէր, այս 10 օրերի ընթացքում բավականին ակտիվ ու գրագետ արշավ իրականացրեց: Պայքարի մեկնարկը հուսադրող է եւ գոհացուցիչ: Մարդիկ տեսան հստակ իր տեսակետը հայտնող ընդդիմություն:

Կարդացեք՝ էջ 6

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 79 (4214), 19 մայիս, երեքշաբթի, 2026

www.hraparak.am

Զինված ուժերում, մեր տեղեկություններով, սկսել են ցուցակագրել ծառայողներին՝ ըստ իրենց բնակության վայրերի, եւ զգուշացրել են, որ անխտիր ստուգելու՝ նրանք եւ իրենց ընտանիքի անդամները մասնակցել են արդյոք հունիսի 7-ի ընտրություններին: Այս փաստը դժգոհությունների ալիք է բարձրացրել, քանի որ չեղարկել են նաեւ այդ օրերի համար գրանցած արձակուրդները: Հատուկ զգուշացրել-սպառնացել են՝ ընտրության չմասնակցողների եւ իրենց ընտանիքների համար վատ է լինելու: Մեր աղբյուրի փոխանցմամբ՝ այս պահի դրությամբ դեռ չեն ասել, թե ում պետք է ընտրել, սակայն դա առանց ասելու էլ պարզ է: Պարզ չէ մի բան՝ եթե մարդիկ գնան ընտրության, իշխանությունն ինչ երաշխիք ունի, որ իրենց են ընտրելու, այլ ոչ թե ընդդիմությանը: Մարդիկ առաջվա պես միամիտ չեն, որ մտածեն, թե գաղտնի տեսախցիկներով հետեւելու են իրենց եւ պարզելու են, թե ում ընտրեց քվեախցիկ մտած պետական ծառայողը:

ԲՏԱ նախարար Մխիթար Հայրապետյանը, որ սովորել է ԵՊՀ արեւելագիտության ֆակուլտետի թուրքագիտության բաժնում, 2015-ին, երբ եղել է 25 տարեկան, աշխատել է «Ախթամար տուր» տուրիստական ընկերությունում՝ որպես էքսկուրսավար: Նա տուրիստական խմբեր է ուղեկցել Արեւմտյան Հայաստան, պատմել հայրենիքի կորսված մասի, ցեղասպանության եւ Թուրքիայի ժխտողականության մասին: 2018 թվականին, երբ նա նշանակվեց սփյուռքի նախարար, հրապարակված իր կենսագրության մեջ «Ախթամար տուր»-ում աշխատելու մասին հիշատակում կար, իսկ այժմ Հայրապետյանը խմբագրել է իր կենսագրությունը եւ այնտեղից հեռացրել անցանկալի դրվագները, այդ թվում՝ գիդ աշխատելու վերաբերյալ հիշատակումը:

Իջեւանից մեզ տեղեկացրին, որ Քրեական ոստիկանության Տավուշի մարզի աշխատողները՝ քաղաքացիական հագուստով, հերթապահում են Իջեւանում ընդդիմադիր քաղաքական ուժերի շտաբների մոտակայքում, որ տեսնեն, թե ովքեր են ելումուտ անում շտաբներ: Քրեական ոստիկանության աշխատողները հիմնականում Տավուշի մարզի բնակիչներ չեն եւ հույս ունեն, որ իրենց ճանաչողներ չեն լինի, բայց մարդիկ ճանաչել են: Իջեւանցիները վրդովված են՝ Քրեական ոստիկանությունը, փոխանակ հանցագործությունների բացահայտմամբ զբաղվի, զբաղված է հանրությանն ահաբեկելով:

Այդպես էլ չհասկացավ

Երբեք Հայաստանի հասարակությունն այսքան բեւեռացված ու պառակտված չի եղել, եւ դա բացառապես Նիկոլ Փաշինյանի «շնորհիվ» է: Ահա՝ քարոզարշավի է դուրս եկել, մի կին է մոտենում, թե՝ թող գրկեմ քեզ, լուսանկարվեմ հետդ, զգույշ եղիր, «ջանիդ մեռնեմ»: Իսկ մեկ ուրիշն ասում է՝ դու իմ հայրենիքն ես գողացել, մի ամբողջ լուսավոր սերունդ ես սպանել, դու իրավունք չունես մնալու այդ պաշտոնին, պետք է հեռանաս: Սրանք՝ երկուսն էլ մեր հասարակության անդամներն են, երկուսն էլ մեկական ձայն ունեն եւ ընտրական հավասար իրավունք, թեեւ, իհարկե, շատ անարդար է, որ անգրագետ ու սպառողի հոգեբանությամբ մեկը պետք է որոշի հայրենիքի համար ցավող եւ իր պետության ապագայով խիստ մտահոգ մարդկանց ճակատագիրը: Բայց խնդիրն այս կարծիքների բեւեռացումը չէ՝ մենք պետք է կարողանանք գտնել մեզ միավորող գաղափարներ, պետք է կարողանանք գտնել համակեցության կանոններ, եւ հանրային հաշտեցում է մեզ հարկավոր, որ մեր պետությունը չկորցնենք: Խնդիրը նաեւ այն է, որ պետության ղեկին գտնվող անձը, որը հավակնում է եւս 5 տարի կառավարելու իրավունք ստանալ, չի գիտակցում, որ պետությունը չի կարող կազմված լինել միայն իրեն գրկող, փաղաքշող, իրենով հիացող կիսագրագետ մարդկանցից, որոնք չեն գիտակցում, թե մեզ առջեւում ինչ է սպասվում: Այս մարդը չի գիտակցում, որ մեր պետության լավ քաղաքացին, օրինակելի հայը, մնայուն արժեքն այն հուզված բժշկուհին է, այն աղջնակն է, որն իրեն ասում էր՝ հայրենիքս ես հանձնել, մետրոյի կինն է, արցախցի մայրիկն է, զոհերի մասին խոսող քաղաքացին է, այն՝ բուկլետը չվերցնող տղամարդն է, Զարուհի Փոստանջյանն է... Որ ինքը չի կարող ոչնչացնել իրեն քննադատող, իր պաշտոնին հավակնող, իրեն չսիրող մարդկանց: Չի կարող արգելել, որ մարդիկ ընտրություններին մասնակցեն:

Տաշիրում նախօրեին Սուրեն Պապիկյանի արարքը «ստուկաչություն» են որակում, եւ այն բացասական մեծ ազդեցություն է թողել մինչ այդ իշխանության մեջ համեստ եւ կիրթ մարդու տպավորություն թողած պաշտպանության նախարարի հեղինակության վրա: Պապիկյանի ցուցումով, հիշեցնենք, բերման են ենթարկվել եւ ձերբակալվել 10 տաշիրցի, որոնք Սամվել Կարապետյանի աջակիցներն են եւ այդ պահին քարոզարշավ անելիս են եղել, բայց Պապիկյանը համարել է, որ խոչընդոտում են իրենց հավաքին՝ փակել են իրենց ճանապարհը, ու հրահանգել է ոստիկանությանը՝ նրանց բերման ենթարկել: Մեզ ասացին, որ Սամվել Կարապետյանի թիմում ի սկզբանե հակված են եղել իրենց համերկրացուն՝ լոռեցի Պապիկյանին խնայել: Դա նկատելի եղավ նաեւ Նարեկ Կարապետյանի արձագանքից. «Սուրեն ջան, դու գյուղի նորմալ տղա ես, մի արա»: Սակայն կիրակի օրվա միջադեպից հետո մեզ ասացին, որ անգամ Պապիկյանի մերձավորներն են հիասթափվել նրա պահվածքից:

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԿԱԾՈՒՄ Է ԱԿԱՅԻՆ

Որոշ տեղեկություններով, ուրբաթ օրը Վանաձորում իրավապահները խուզարկություն ու ձերբակալություններ են արել ոչ միայն «Ուժեղ Հայաստան» կուսակցության գրասենյակներում եւ այդ ուժի հետ փոխկապակցված անձանց պատկանող տարածքներում, այլեւ քաղաքապետի պաշտոնակատար Արկադի Փելեշյանի մերձավորների շրջանում: Վանաձորում խոսում են, որ ՔՊ-ի սրտի քաղաքապետ Ական «տակից» աշխատում է Սամվել Կարապետյանի համար, «ճշտի պանյատները» թույլ չեն տալիս, որ նա Նիկոլ Փաշինյանի համար «վիզ դնի», իշխանություններն էլ իմացել են ու որոշել նրա հետ կապ ունեցող անձանց միջոցով ստուգել ու պարզել դա: Թեեւ չի բացառվում, որ սա Նիկոլ Փաշինյանի հերթական կասկածամտության դրսեւորումն է, որը հիմքեր չունի: Թե ինչ են պարզել այդ գործողությունների արդյունքում, մեզ չհաջողվեց իմանալ: Չկարողացանք կապ հաստատել Ակայի հետ: Սակայն մեզ ասացին, որ բոլոր ձերբակալվածներին արդեն ազատ են արձակել: Չի բացառվում, որ ընդամենը վախեցնելու համար են այդ օպերացիան արել, որ Ակայի պես ոչ այնքան յուրային համայնքապետերը չփորձեն տակից խաղեր տալ ընդդիմադիրների հետ:

ՆՈՐ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ Ի՞ՆՉ Է ԹԱՔՑՆՈՒՄ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ

ՍԱՀՄԱՆ

Նիկոլ Փաշինյանի իշխանության օրոք մեծ հայրենիքի տարածքը, Բալգակի ասած՝ շագրենի կաշվի նման անընդհատ փոքրանում է: Ադրբեջանին նոր տարածքների հանձնումը Հայաստանի բնակիչներին հուզող ամենակարեւոր խնդիրներից է: Մայիսի 16-ին ՔՊ-ի նախընտրական քարոզարշավի ընթացքում մի քաղաքացի Նիկոլ Փաշինյանին հարց տվեց, թե հաջորդիվ որ տարածքներն է հանձնելու: Փաշինյանը

վստահեցրեց, որ ՀՀ ինքնիշխան տարածքից ոչինչ չի հանձնելու, հանձնվելու են այն տարածքները, որոնք ադրբեջանական են:

Հիշեցնենք, որ երբ Նիկոլ Փաշինյանն Ադրբեջանին էր հանձնում Շուռնուխում քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող տարածքները, պնդում էր, թե այդ տարածքները հայկական չեն: Նույնը՝ Կիրանցում: Դա, իհարկե, իրականացվում էր սահմանազատման անվան տակ, բայց այդպես էլ մեզ չեն ասել, թե իրականացված կամ իրականացվելիք սահմանազատումը որ քարտեզով է իրականացվել եւ իրականացվելու: Ով եւ ինչի հիման վրա է որոշել, որ տասնյակ, անգամ հարյուրավոր տարիներ հայերի տիրապետության տակ գտնվող հողերն ադրբեջանական են:

2024թ. գարնանը, առանց անգամ սահմանազատման հանձնաժողովների կանոնակարգը հաստատելու, Կիրանց գյուղին պատկանող, Կադաստրի կոմիտեից տրված սեփականության վկայականներով 58 անշարժ գույք՝ մոտ 15 հեկտար տարածք, միակողմանի կերպով, ապօրինորեն հանձնվեց Ադրբեջանին: Այդ հողերի տերերին կառավարության գաղտնի որոշումով դրամական մեծ փոխհատուցումներ տրվեցին: Հայտնի չէ, թե ինչ սկզբունքով տրվեց այդ փոխհատուցումը, լուրեր կան, որ գումարների չափը որոշել են կամայականորեն եւ ոչ համաչափ: Կիրանցից 6 ընտանիք, որոնց հարազատները զոհվել են հայրենի գյուղի սահմանները պաշտպանելու ժամանակ, սկզբունքորեն կատեգորիկ հրաժարվել են իրենցից խլված, Ադրբեջանին հանձնված հողերի համար դրամական փոխհատուցում ստանալ: Փաշինյանը, որպեսզի հիմնավորի ՀՀ տարածքից Ադրբեջանին նոր տարածքների հանձնումը, հողերի հանձնումով մտահոգ եւ Արծվաշենի մասին հիշեցնող քաղաքացուն նախօրեին ասաց. «Մենք՝ ինքներս էլ ունենք խնդիր. Արծվաշենը Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածք է, եւ մենք չենք կարող դրանից հրաժարվել: Այսինքն՝ մենք չենք կարող հրաժարվել, չենք կարող ասել, որ Արծվաշեն չկա: Խոսքը վերաբերում է ադրբեջանական երեք տարածքներին՝ Բարխուդարլի, Խեյրիմլի... Սահմանազատման արդյունքում մենք լուծումներ կգտնենք, թե ինչ ենք անում»: Ապա Փաշինյանը հայտարարել է Ադրբեջանին հանձնվելիք 3 տարածքների մասին, սակայն նշել է 2-ը՝ Բարխուդարլի, Խեյրիմլի:

Խեյրիմլին Կիրանց գյուղին կպած փոքր գյուղ է, որի տարածքը՝ քանդված տներով, 1990-ական թվականների սկզբից գտնվում էր ՀՀ զինված ուժերի վերահսկողության տակ: 2024թ. գարնանը, սահմանազատման անվան տակ, Կիրանցի 15 հեկտար հողերի հետ Խեյրիմլիի տարածքներն արդեն իսկ հանձնվել են Ադրբեջանին: Իջեւան քաղաքից սերված Նիկոլ Փաշինյանը կամ չի հիշում, որ Իջեւան համայնքի Կիրանց գյուղին կպած Խեյրիմլիի տարածքները 2 տարի առաջ հանձնել է, կամ էլ միտումնավոր խաբում է: Բարխուդարլին եւ Սոֆուլուն խորհրդային շրջանում փոքր գյուղեր էին՝ Իջեւան-Այգեհովիտ ճանապարհին, որոնք վարչատարածքային առումով պատկանում էին Ադրբեջանի Ղազախի շրջանին: Դրանք 1990-ականներից ավերակ վիճակում են: Ադրբեջանը պահանջում է խորհրդային շրջանում 4 անկլավների՝ Բարխուդարլուի, Սոֆուլուի, Վերին Ոսկեպարի (Յուխարի Ասքիպարա) եւ Տիգրանաշենի (Քյարքի) հանձնումը: Այդ տարածքների խնդիրը միշտ միասին է դիտարկվել: Սակայն Նիկոլ Փաշինյանը լողզված, կիսատ, ոչ հստակ պատասխան է տալիս: Երբ հողերի առաջիկա հանձնումով մտահոգ քաղաքացին հարցնում է՝ «ստացվում է, որ հիմա մենք օկուպանտ ենք, պարոն Փաշինյան, քանի որ Ադրբեջանի տարածքները գտնվում են մեր վերահսկողության տակ», Փաշինյանը նորից մանիպուլյացիա է անում. «Լսեք, հիմա այդ տերմիններն այլեւս անցյալում են, որովհետեւ կոնֆլիկտը հաղթահարված է: Հիմա մենք սահմանազատման արդյունքում կլուծենք վերջին հետեւանքները»:

Հայ-ադրբեջանական հակամարտությունը հաղթահարված չէ, Փաշինյանի իշխանությունը ոչ թե հակամարտության հետեւանքներն է հաղթահարում, այլ Ադրբեջանին նոր տարածքներ է հանձնում: Քաղաքացու այն դիտարկմանը, թե Ադրբեջանը չի ճանաչում ՀՀ տարածքային ամբողջականությունը եւ Հայաստանն անվանում է «Արեւմտյան Ադրբեջան», Փաշինյանը նշել է. «Չկա տենց բան, էդ մեր ընդդիմությունն է ասում տենց բան: Մենք ասում ենք, որ ռազմավարական գործարքի էությունը հետեւյալն է. երկու երկրները կենտրոնանում են իրենց միջազգային ճանաչում ունեցող տարածքների վրա, եւ ժողովուրդները՝ Ղարաբաղի ժողովուրդը, տնավորվում է այստեղ, մեր մյուս փախստականները՝ եղբայրներն ու քույրերը, տեղավորվում են այստեղ, եւ մենք կենտրոնանում ենք Հայաստանի Հանրապետությունում: Մենք դուրս ենք գալիս պանդուխտի եւ գաղթականի տրամաբանությունից եւ փակում նաեւ այդ էջերը: Նույնը վերաբերում է նաեւ Ադրբեջանին»: Փաշինյանը, իհարկե, ստում է՝ ոչ թե ընդդիմությունն է խոսում «Արեւմտյան Ադրբեջանի» մասին, այլ դրա մասին պարբերաբար հայտարարում է Իլհամ Ալիեւը, Ադրբեջանի պետբյուջեից ֆինանսավորում է այդ անվանումով հասարակական կազմակերպությունը, Հայաստան տեղափոխվողների ցուցակներ են կազմում եւ այլն:

Փաշինյանի կողմից որպես հանձնվելիք տարածք Բարխուդարլիի հիշատակումից կարելի է կռահել, որ ԱԺ ընտրություններով ՔՊ-ական իշխանության վերարտադրման դեպքում Ադրբեջանին են հանձնելու նշված 4 անկլավները եւ այդ գործընթացն անվանելու են սահմանազատման շարունակություն: Այդ 4 գյուղերի տարածքները հանձնելու հետեւանքով խախտվելու է Հայաստանի մյուս տարածքների կապը Սյունիքի հետ, Իջեւան-Նոյեմբերյան, Իջեւան-Բերդ տրանսպորտային հաղորդակցությունում մեծ դժվարություններ են առաջանալու, հանրապետության հյուսիս-արեւելյան տարածքների եւ Լոռու թիկունքն անպաշտպան է դառնալու, Հայաստանը սնուցող մայր գազատարը հայտնվելու է նորահայտ սահմանից 30 մետր հեռավորությամն վրա եւ այլն:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՄՈՏ 40 ԱՆՁԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ Է ՏՐԱՄԱԴՐԵԼ, ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻՑ ԱԶԱՏԵԼ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը ավագանու մարտի 20-ի նիստով հաստատել եւ նյութական օգնություն է տրամադրել համայնքի 18 բնակչի: Օգնությունը նվազագույնը 50 հազար դրամ է, առավելագույնը՝ 200 հազար: Որոշման մեջ նշել են նաեւ օգնություն տալու պատճառները՝ առողջական խնդիրներ ունեցողներին, փոխհատուցումներ՝ շինանյութի տեսքով, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց եւ փոխանցում՝ սննդի տեսքով: Ավագանու ապրիլի 27-ի նիստով նմանատիպ օգնություն է ստացել 21 քաղաքացի: Ու այս ամենն արվել է ընտրություններից 1 ամիս առաջ: Օգնություն բաժանելուց զատ, Վարդենիսի համայնքապետը, որն ինտենսիվորեն ներգրավված է «Քաղպայմանագրի» քարոզարշավում, տասնյակից ավելի բնակիչների մասամբ կամ ամբողջությամբ ազատել է անշարժ գույքի կամ ավտոմեքենայի գույքահարկից:

Այսպես. համայնքապետն ավագանու մարտի 20-ի նիստում Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի բնակիչ Էմիլ Խաչատրյանին պատկանող LEXUS GX 470 մակնիշի 70AR470 պետհամարանիշի ավտոմեքենայի 79 հազար 700 դրամ գույքահարկը զիջել է ամբողջությամբ: Բայց, չգիտես ինչու, մեկ ամիս անց՝ ապրիլի 27-ին, ավագանու նիստով այդ որոշումն անվավեր է ճանաչվել: Էմիլ Խաչատրյանն Ակունք բնակավայրի վարչական ղեկավար Նիկոլա Խաչատրյանի եղբայրն է: **Նիկոլա Խաչատրյանը** մեզ հետ զրույցում ասաց, որ եղբոր մեքենան չի շահագործվում, խնդրել է համայնքի ղեկավարին, որ գույքահարկը զիջի, սակայն հետո իմանալով, որ իմ եղբայրն է, չի զիջել: Գուցե Դուք որեւէ այլ քաղաքական ուժի՞ եք սատարում, այդ պատճառով չի զիջել: «Նման բան չկա»:

Մի քանի հարց ուղղեցինք **Ահարոն Խաչատրյանին**. ինչո՞ւ ընտրություններից առաջ որոշեցիք օգնություն տրամադրել բնակիչներին կամ գույքահարկ զիջել: «Ճիշտն ասած, ես ընտրությունների նախաշեմին չեմ զիջել, պարբերաբար զիջել ենք գույքահարկը, դա եղել է հունվարին, փետրվարին, մարտին: Ժողովրդի վիճակն այնքան վատ է, որ փորձում ենք օգնել: Եթե Դուք հետեւել եք մեր ավագանու նիստերին, ես այդ ամենն արել եմ ոչ թե այս պահին, անցած տարի էլ եմ օգնություն տվել, հունվարին էլ եմ օգնություն տվել: Ամեն անգամ ինձ մոտ հավաքվում են հարյուրից ավելի դիմումներ: Ուսումնասիրություն ենք կատարում, նոր օգնություն տալիս: Դիմողները շատ-շատ են, ես հո չեմ կարող էդքանը տալ: Ժողովուրդն էլ ամեն անգամ գալիս, ասում են՝ ինչ-որ մեկին օգնություն տվեցիր, մերը մնաց: Դրանից էլ՝ հերթով, քիչ-քիչ դնելով գալիս եմ: Դա ընտրակաշառքի հետ բացարձակապես կապ չունի: Պատկերացրու՝ բնակիչը եկել, ասում ա՝ 4 անչափահաս երեխա ունեմ, քամին տանիքը տարել ա, չօգնեմ: Մայիս ամսին ասել եմ, որ ոչ մեկին օգնություն չտան, քանի որ ընտրական ամիս է: Նույնն էլ՝ գույքահարկի մասին: Կան մարդիկ, որ մեքենաները չեն շահագործում, հարկը տարիներով չի մուծվում, որոշ չափով օգնում ենք, որ կարողանա մնացածն էլ ինքը մուծի»:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆՆ ԱՌԱՋԻՆԸ ԽԱԽՏԵՑ ՔՊ-Ի ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

ՇԱՐԺ

Ենք գրել էինք, որ ՔՊ-ի քարոզչական բուկլետները բաժանելու գործընթացում դրված է ոչ կուսակցականների, այլ վարձու աշխատողների վրա: Երիտասարդական մեծ կառույց ունեցող, համենայնդեպս այդպես ներկայացող ուժը ոչ թե իր անդամների միջոցով է քարոզչական նյութերը տարածում, այլ մարդիկ է վարձել, որոնք 7-10 օր բուկլետ բաժանելու համար 200-250 հազար դրամ աշխատավարձ են ստանալու: Բայց այս գումարը վաստակելը, պարզվում է, հեշտ չէ, քանի որ հատկապես Երեւանում համատարած մերժում, վիրավորում են ՔՊ-ի բուկլետ բաժանողներին, դուռն են շրխկացնում նրանց վրա, անպատվում են, անգամ դեպք է եղել՝ ջուր են շփել նրանց վրա եւ այլն:

Ընդ որում, վարձու աշխատողների վրա էլ վերակացուներ են նշանակել. յուրաքանչյուր երկու հոգու՝ մեկ վերահսկող, որը պտտվում է բուկլետ բաժանողների հետեւից, հետեւում, որ բուկլետները չնետեն աղբարկղները, այլ մտնեն բնակարաններ, բաժանեն մարդկանց: Չնայած ՔՊ-ականների եւ Նիկոլ Փաշինյանի հանդուգն, ինքնավստահ հայտարարություններին, թե ժողովուրդն իրենց սիրում է, մերժում է ընդդիմադիրներին, փաստն այն է, որ մարդկանց՝ ՔՊ-ին ուղղված վերաբերմունքը տարածվում է անգամ բուկլետ բաժանող անծանոթ, ոչ մի մեղք չգործած երիտասարդների վրա:

Մեր ձեռքի տակ է հայտնվել նաեւ ՔՊ-ի քարոզչական ուղեցույցը, որով քարոզարշավի շեմին զինել են իրենց քարոզիչներին ու համակիրներին՝ մանրամասն նկարագրելով, թե որ հարցին ինչպես պատասխանեն, ինչպես իրենց պահեն, երբ մարդիկ բացասաբար են իրենց վերաբերվում, ինչ «կռուտիտներ» օգտագործեն, եթե տհաճ հարցեր տան մարդիկ եւ այլն: Այդ ուղեցույցից պարզ է դառնում, որ իշխող թիմում հնարավորինս զգուշավոր, քաղաքավարի շփում են նախատեսել ի սկզբանե, որ մարդիկ չդիվոտեն, լսեն քարոզիչներին, վերջիններս ադեկվատ բացատրություններ հնչեցնեն՝ ի պատասխան դառը հիշեցումների, օրինակ, Արցախի, զոհերի, քանդված ասֆալտի կամ այլ թեմաներով: Բայց անգամ այս նախապատրաստությունները չեն կարողացել իրականացնել, եւ քանի օր է՝ տեսնում ենք, որ այս ուղեցույցի գլխավոր խախտողը հենց Նիկոլ Փաշինյանն է, որի նյարդերը տեղի են տալիս, եւ նա արդեն հոգեպես ծանր վիճակում է հայտնվել:

Ուղեցույցը վերնագրել են՝ «2026թ. խորհրդարանական ընտրություններ. ՔՊ դռնեդուռ արշավ»: «Ինչո՞ւ է աշխատանքը դռնեդուռ» կարեւոր հարցին պատասխանում են հենց ՔՊ ուղեցույցում. «Դռնեդուռ աշխատանքի հիմնական գաղափարը՝ մասնակցություն, վստահություն եւ թիրախավորված զրույցներ»: Ըստ ուղեցույցի՝ «անձնական զրույցը վստահություն է ստեղծում, անձնական շփումն ավելի արդյունավետ է, քան գովազդը , սոցիալական մեդիան»: Հատուկ շեշտվում է, որ նպատակ չկա բոլորին համոզելու. «Մեր նպատակն է՝ մոբիլիզացնել աջակիցներին, համոզել չեզոքներին: Կարեւորը՝ աջակիցներին բերել ընտրատեղամաս, չեզոքներին համոզել, որ ՔՊ ընտրելը կարեւոր է երկրի եւ երեխաների ապագայի համար»: Այսինքն, ՔՊ-ում հասկացել են, որ միայն երդվյալ նիկոլականները կարող են այսքանից հետո իրենց ընտրել, ուստի նպատակը նրանց ընտրատեղամաս տանելն է: Շեշտվում է՝ կարեւոր է, որ իրենց աջակիցներն անպայման մասնակցեն քվեարկությանը, ուստի ամեն գնով պետք է համոզել, որ հունիսի 7-ին գնան ընտրության: Օրինակ՝ այսպես. «Ամեն դեպքում, Ձեր ձայնը շատ կարեւոր է, մենք ժողովրդավարական երկրում ենք ապրում 2018թ.-ից սկսած, երբ մեր երկրի ու երեխաների ապագան ձեր ձայներով է որոշվում: Եվ ամենակարեւորը՝ սա ընտրություն է խաղաղության եւ պատերազմի միջեւ: Խնդրում եմ՝ ընտրեք խաղաղությունը»:

Խորհուրդ են տալիս զրույցը վարել 1-3 րոպե տեւողությամբ, խոսել թոշակների 10 հազար դրամի եւ պարտադիր առողջապահական ապահովագրության մասին: Անգամ նկարագրված է, թե դա ինչպես անել՝ դուռը թակել, ներկայանալ, ներկայացնել թիմը, ճշտել՝ ժամանակ կարող են տրամադրել, շարունակե՞նք խոսակցությունը: Եթե ոչ, հանգիստ, առանց համոզելու հեռանալ: «Դուռը մեղմ թակել. կարող է փոքր երեխա քնած լինել, կարող է տանը առողջական խնդիր ունեցող մարդ քնած լինել: Կանգնել մեկ քայլ հետ, ժպտալ, խոսել հանգիստ տոնով: ... Սկսել խաղաղության թեմայից: Օրինակ. «Մենք խնդրում ենք, որ դուք հունիսի 7-ին տեր կանգնեք խաղաղությանը՝ քվեարկելով ՔՊ-ի օգտին: Դա Հայաստանի խաղաղ ապագան երաշխավորելու միակ տարբերակն է»: Հարգել մարդկանց ժամանակը, եթե զբաղված են, շնորհակալություն հայտնել, անցնել առաջ: Հարգալից վերաբերմունքը ձեւավորում է քաղաքական թիմի նկատմամբ վերաբերմունքը»,- ասված է ուղեցույցում:

Մի ուշագրավ արձանագրում եւս. չնայած Փաշինյանն ամեն օր հովագրությունը, թոռների ապագան: Եթե երիտասարդ է, խոսել կրթությունից, դեպի Արեւմուտք եւ զարգացող աշխարհի բացվող հնարավորություններից»:

Եվ՝ ինչպես արձագանքել մերժմանն ու վիրավորանքին. «Եթե դուռը փակում են, չվիճել, չերկարացնել զրույցը: Եթե մարդը հետաքրքրված չէ կամ փակում է դուռը, ընդունել որոշումը, քաղաքավարի հեռանալ: Ասել՝ «շատ լավ, մաղթում ենք ձեզ լավ օր», կամ՝ «մեր բազմաթիվ աջակիցներն այդպես չեն կարծում», «ձեր բակի/



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԱԶԱԿԻՑԸ ԴԱՏԱՊԱՐՏՎԵԼ Է 4 ՏԱՐԻ ԱԶԱՏԱԳՐԿՄԱՆ՝ ՍՊԱՍՈՒՄ Է ՎԵՐԱՔՆՆԻՉԻ ՈՐՈՇՄԱՆԸ

Քարոզարշավի ընթացքում Նիկոլ Փաշինյանի կողքին տարբեր կասկածելի կերպարներ են հայտնվում, որոնք նրան գրկում են, հետը լուսանկարվում, սեր խոստովանում: Նախօրեին լրագրողները մի դեպք էին բացահայտել. նույն կինը օրվա տարբեր ժամերին, տարբեր հագուստներով մոտենում է Փաշինյանին, լուսանկարվում, ինչ-որ տեքստ ասում: Մենք մի քանի լուսանկարում տեսանք, որ նրան սատարողների թվում է նաեւ իրեն մոդել անվանող, բայց ոմանց կարծիքով՝ հայտնի մասնագիտության տեր մի կին՝ Անիտա Հարությունյան անունով: Պարզվում է, այս կինը շաբաթներ առաջ դատավոր Մնացական Մարտիրոսյանի կայացրած դատավճռով դատապարտվել է 4 տարվա ազատազրկման: Մոլի նիկոլական այս կնոջը մեղադրանք է առաջադրվել մի քանի հոդվածով՝ այն բանի համար, որ նա 2025 թ. նոյեմբերի 9-ին «Լեգենդ մյուզիք հոլլ» ակումբում զենքի գործադրմամբ խուլիգանություն է արել, ինչից հետո տեղափոխվել է ոստիկանության Կենտրոնի բաժին, որտեղ, ըստ գործի նյութերի, բռնություն է գործադրել ոստիկաններից մեկի նկատմամբ, հայհոյել է եւ այլն: Քանի որ իշխանամետ հայացքներ է ունեցել, չեն կալանավորել, այլ որպես խափանման միջոց կիրառվել են 1 միլիոն դրամ գրավ եւ բացակայելու արգելք: Սակայն առաջին ատյանի դատարանը նրան ազատազրկման է դատապարտել, դատավճիռը դեռ օրինական ուժի մեջ չի մտել՝ պաշտպանական կողմն այն բողոքարկել է Վերաքննիչ դատարան, ինչի հետեւանքով Հարությունյանն այս պահին ազատության մեջ է եւ անգամ մասնակցում է Նիկոլ Փաշինյանի քարոզարշավին: Սա Անիտա Հարությունյանի մասնակցությամբ միակ քրեական պատմությունը չէ: Նրա նկատմամբ հարուցված եւս երկու քրգործ կա, որոնք վերաբերում են վարորդական իրավունքի կասեցված լինելու պայմաններում տրանսպորտային միջոց վարելուն: Երկու դեպքում էլ դատարանները, որպես վերջնական պատիժ, սահմանել են 375 հազար դրամ տուգանք:

Հատկանշական է, որ իշխանության ամենաակտիվ պաշտպաններից ոմանց անունները վերջին տարիներին պարբերաբար հայտնվում են քրեական պատմությունների ու աղմկահարույց միջադեպերի կենտրոնում: Նախորդ տարեվերջին էլ Նիկոլ Փաշինյանի մեկ այլ ակտիվ աջակից՝ Թերեզա Սարգսյանը, Վերաքննիչ դատարանի որոշմամբ դատապարտվել էր 4 տարվա ազատազրկման: Թեեւ պաշտպանական կողմը փորձել էր բողոքարկել որոշումը, Վճռաբեկ դատարանը վարույթ չէր ընդունել գործը, ինչի արդյունքում դատավճիռը մտել էր օրինական ուժի մեջ, եւ Սարգսյանն արդեն քանի ամիս է՝ իր պատիժն է կրում կալանավայրում: Թերեզա Սարգսյանին մեղադրանք էր առաջադրվել դեռեւս 2022 թվականին: Ըստ իրավապահների՝ նա կեղծ հիվանդության ախտորոշմամբ, խաբեության եղանակով Լոռու մարզի ՏՍ-ում հաշվառված զորակոչիկ Հովհաննես Մանուկյանի հորից՝ Գրիգոր Մանուկյանից, պահանջել եւ ստացել էր խոշոր չափի՝ 5 հազար դոլար գումար՝ խոստանալով որդուն ազատել ծառայությունից: Սակայն հետագայում Հովհաննես Մանուկյանը զորակոչվել էր ՀՀ զինված ուժեր, եւ հայրը դիմել էր իրավապահներին՝ խարդախ ՔՊ-ականին պատժելու հաղորդմամբ: Ավելի վաղ գրել էինք նաեւ, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչությամբ զբաղվում է նաեւ TikTok-ում Queen 666 անունով հայտնի Դիանան, որը, ըստ հրապարակումների, գրանցված է Escort in Armenia կայքում, ունի վճարովի ծառայություններ առաջարկող տելեգրամյան էջ, ինչպես նաեւ՝ վճարովի տեսանյութերի համար առանձին տելեգրամյան հարթակ:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

Ի՞ՆՉ Է ՍԱ, ԵԹԵ ՈՉ ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՀՈՒՆԻՍ 7

Նիկոլ Փաշինյանի քարոզարշավն իր ու իր թիմի համար շարունակում է ուղեկցվել «տհաճ անակնկալներով»: Հերթական դրվագին երեկ ականատես եղանք. 44-օրյա պատերազմում բռնի անհետացած բարձրաստիճան սպա Հրանտ Պապիկյանի քույրը քարոզարշավի ժամանակ մոտեցավ Նիկոլ Փաշինյանին եւ ասաց. «Այն, ինչը որ պետք է ասեմ, Դուք բազմիցս լսել

Էջը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

եք, բայց ես Աստծուն շնորհակալ եմ, որ հնարավորություն ընձեռվեց՝ այսքան մոտիկ տարածությունից նայել Ձեր աչքերի մեջ եւ ասել, որ Դուք գողացել եք իմ հայրենիքը: Դուք գողացել եք իմ հայրենիքը, Դուք շարունակում եք գողանալ իմ հայրենիքը: Դուք ազգի մի ամբողջ երիտասարդ սերունդ եք ոչնչացրել: Դուք գողացել եք իմ երեխեքին, Դուք գողացել եք իմ եղբորը, իմ եղբորն եք գողացել, Դուք գողացել եք իմ ուրախությունը: Դուք գիտեք՝ քանի բռնի անհետացած եւ կամ անհայտ կորած բարձրաստիճան սպա ունենք, քանի՞ հատ ունենք: Դուք մեզ կոտորել եք»: Այս ելույթից Փաշինյանն ընկավ հոգեխանգարմունքի մեջ, կորցրեց ինքնատիրապետումը, սկսեց քաշքշել տիկնոջը: «Դուք կներկայանա՞ք, ... բժշկական գիտությունների թեկնածու, որտե՞ղ եք աշխատում Դուք, որտե՞ղ եք աշխատում, մենք առողջության ապահովագրություն ենք ստեղծել, մենք պետություն ենք ստեղծել: Ուրեմն, ուրեմն, լսե՛ք, լսե՛ք... ի՞նչն եմ քանդում: Եթե Դուք Ռոբն եք, ես Ռոբին էլ եմ կզացնելու, կալուգացուն էլ եմ կզացնելու, Գագոյին էլ եմ կզացնելու, Սերժին էլ եմ կզացնելու, Ռոբին կզացնելու եմ ու կզացնելու եմ»,- գոռալով ասում էր Նիկոլ Փաշինյանը: Քաղաքացին արձագանքեց. «Ես հայ եմ, կզած մարդը Դուք եք»: Փաշինյանը գոռոցով շարունակում էր. «Ռոբը նստելու ա, Ռոբին սատկացնելու եմ, կալուգացուն էլ եմ սատկացնելու...»: Հետո քաշեց կնոջ ձեռքից. «Հլը մի որպե՞ս մի գնա.... էն մասկեքով, մասկեքով, որ ղարաբաղյան ակցենտով խոսում են, դրանք փախածներն են, փախածները, Ֆերարրի ֆորսաժով փախել են պատերազմից..... Ռոբիդ կզացնելու եմ, չոքը՞ցնելու եմ, սատկացնելու եմ, կալուգացուդ էլ եմ չոքացնելու: Դուք եք քանդել, Ղարաբաղով թալանել եք, եւ ես ասում եմ՝ էն Ղարաբաղի ակցենտով մասկավորվածները, որ բան են տարածում... վիդեոն, դուք փախած լակոտներ եք, հանեք ձեր մասկեքը, հանեք ձեր մասկեքը, այ ստահակներ, այ փախածներ, այ, այ, մեր երեխեքին հակառակորդի առաջ մենակ..., Ղարաբաղի ակցենտով, մասկեքով վիդեո են տարածում, ասում ենք՝ դուք վախկոտ համբալներ եք, ովքեր փախել են մարտադաշտից, հանեք ձեր մասկեքը, հանեք ձեր մասկեքը՝ Ռոբի լակոտներ, Սերժի լակոտներ, Գագոյի լակոտներ, կալուգացու լակոտներ, չոքը՞ցնելու եմ սաղիդ, հատ-հատ մասկեքները կոխելու եմ համապատասխան տեղերը»,- չէր հանգստանում նա:

ԵՊՀ դոցենտ, քաղաքական գործիչ **Նարինե Դիլբարյանը**, մեզ հետ զրույցում խոսելով Նիկոլ Փաշինյանի փողոցային բառապաշարի, նրա քարոզարշավների ու սպառնալիքների մասին, ասաց. «Մեծ տագնապով նկատում եմ, որ օրեցօր նախընտրական քարոզարշավն ավելի ու ավելի է վերածվում ատելության խոսքի տարածման, բռնարարքների եւ բռնաճնշումների մի մեծ շղթայի: Դրա բացատրությունը կարող է լինել երկու հարթության վրա: Առաջինն այն է, որ իշխանությունը՝ Փաշինյանի գլխավորությամբ, առաջին անգամ առերեսվում է ոչ թե «ուրախ ավտոբուսի» բնակիչների, այլ ուղղակի հայ քաղաքացիների հետ: Փաշինյանն ուզում է մարդկանց հետ պայմանագիր կնքել, սակայն այդ պայմանագիրը ոչ միայն վաղուց պատռված է, այլեւ մարդիկ ունեն մեծ դժգոհություն, զայրույթի մեծ ալիք: Փաշինյանի ներսի խուճապն այլեւս անկառավարելի է: Իսկ հոգեբանորեն, երբ խուճապը մեծանում է, դրսեւորումները դառնում են վայրագ: Մենք ամեն օր տեսնում ենք, թե ինչպես է վարչապետը կորցնում իր հավասարակշռությունը՝ առերեսվելով քաղաքացիների հետ: Վերջերս Արաբկիրում նրան առաջարկեցին փոխել իր բառապաշարը, եւ նա, որպես արդարացում, ասաց, որ իր վրա աշխատում է, սակայն այսօր տեղի ունեցածը հերթական անգամ փաստում է այն մասին, որ Նիկոլ Փաշինյանի մոտ չի ստացվում իր թերությունների վրա աշխատել: Նրա վարքը, նրա բառապաշարն օրեցօր ավելի անթույլատրելի են դառնում: Այս ամենի երկրորդ հարթությունն էլ այն է, որ իշխանությունները սիրում են ինչ-որ հիբրիդային պատերազմի մասին խոսել: Անգամ Եվրոպայից օգնություն խնդրեցին, որպեսզի այն կանգնեցնեն եւ այլն: Ես անձամբ տեսնում եմ հիբրիդային պատերազմի հետքեր: Օրինակ՝ կիրակի օրը մի զարհուրելի լուր ստացանք, որ քաղաքացին, որը պատռել է ՔՊ-ի նախընտրական պաստառը, հայտնվել է հոգեբուժական կենտրոնում եւ ինքնավնասումն ավարտին հասցնելով՝ վերջ է տվել իր կյանքին: Սոսկալի երեւույթ է, ի՞նչ էր արել տվյալ քաղաքացին՝ ընդամենը պատռել էր ՔՊ-ի պաստառը: Սա ակնհայտ հանցագործություն է: Քաղաքացին քրեական զանցանք չի կատարել: Նա ընդամենը կարող էր տուգանվել 100 հազար դրամի չափով: Դրա նախորդ օրն էլ կանադահայ մի կին, որը մատիտով փորձել էր ՔՊ-ի պաստառի վրա նշումներ անել, ձերբակալվել էր: Ի՞նչ է այն բժշկի անունը, որն Արմեն Հովհաննիսյանին, որպես հոգեկան խնդիրներ ունեցողի, տեղափոխել է բուժհաստատություն: Այնտեղ քաղաքացին պետք է ապահով պայմաններում պահվեր, այնտեղ հատուկ հսկողություն պետք է իրականացվեր, անգամ հատուկ հագուստ պետք է հագցվեր քաղաքացուն, որպեսզի նա չդիմեր ինքնավնասման: Ի՞նչ է սա, եթե ոչ հիբրիդային պատերազմ: Իրավապահները կատարել են հանցագործություն եւ պետք է պատասխան տան»:

ՍՏԱՑՎՈՒՄ Է, ՈՐ ՓԱՇԻՆՅԱՆԸ Ե՛Վ ՊԱՏԵՐԱԶՄ ԲԵՐՈՂ Է, Ե՛Վ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՑՆՈՂ

«Դրապարակի» զրուցակիցն Ազգային ժողովրդավարական բեւեռի ցուցակի երրորդ համարը զբաղեցնող **Արմինե Սախոյանն** է:

- Նախընտրական թեժ քարոզարշավը շարունակվում է: Նիկոլ Փաշինյանի «աբսուրդի թատրոնն» օրեցօր ավելի է սաստկանում: Երկուշաբթի առավոտյան նա, բառի ամենաուղիղ իմաստով, հարձակվեց մի կնոջ վրա, որը հանդգնել էր իր դժգոհությունը հայտնել գործող վարչակարգից: Քաշում էր տարեց բժշկուհու ձեռքից, սպառնում էր, որ «կզը՞ցնելու» է բոլոր նրանց, ովքեր դժգոհ են իր վարած քաղաքականությունից եւ ոչ ադեկվատ վարքագծից: Ի՞նչ գնահատական կտաք նախընտրական քարոզարշավին՝ հաշվի առնելով, թե ինչպիսի անհանդուրժողականությամբ է Փաշինյանը վերաբերվում ընդդիմադիր ուժերին:

- Փաշինյանն ամբողջ վարչական ռեսուրսն իրեն է ծառայեցնում: Ես հենց քիչ առաջ Փաշինյանի հետ ընդհարված տիկնոջ հարցազրույցն էի լսում: Նա պատմում էր, որ ինքը 30-40 տարի ապրում է այդ շենքում, այդ տարածքի մարդկանց լավ գիտի, եւ վստահեցնում էր, որ իրենց տարածքից ընդամենը տասը քաղաքացի էր մասնակցում քարոզարշավին, մնացյալին անխտիր բերել էին եւ դեռ շարունակում էին ավտոբուսներով բերել: Ես վստահում եմ այդ տիկնոջը, նա շատ համարձակ ու արժանապատիվ տիկին է: Ինչ վերաբերում է Փաշինյանի ցայտնոտային վիճակին, հունից դուրս գալուն, ապա այդ ամենը մեկ բանի մասին է վկայում՝ Նիկոլ Փաշինյանն ունի շատ ցածր վարկանիշ: Որքան էլ որ նա փորձում է ցույց տալ, թե իբրեւ ինքը մեծ վստահություն ու հարգանք է վայելում, իրականությունը լրիվ հակառակն է: Հենց մեր քարոզարշավները ցույց են տալիս, թե մարդիկ որքան շատ են իշխանությունից դժգոհ: Քայլում ենք փողոցներով, զրուցում ենք մարդկանց հետ, եւ շատ քչերն են, որ մեզ հետ չեն համաձայնում եւ անհամաձայնության նշան են ցույց տալիս: Մարդկանց մեծ մասը կարծում է, որ Փաշինյանի հեռացումը չունի այլընտրանք: Եթե մենք չենք ցանկանում, որ մեր ապագան կանխորոշի Իլհամ Ալիեւի կամակատարը, ապա հունիսի 7-ին Փաշինյանի հեռացումը պետք է այլընտրանք չունենա: Այսօր տեղի ունեցած միջադեպի ժամանակ Փաշինյանի թիրախում հայտնված կինն արտահայտեց արժանապատիվ հայ մարդու մտածմունքը, սրտի խոսքը: Այդ կնոջն արդեն իսկ սպառնում են: Նա աշխատում է պոլիկլինիկաներից մեկում, եւ միջադեպից հետո տնօրենը նրան ասել է, որ դիմում գրի եւ ազատվի աշխատանքից: Այս ամենը հերթական անգամ փաստում է այն մասին, որ Հայաստանում իրավական համակարգը չի գործում: Հայաստանը շատ հեռու է ժողովրդավարությունից, եւ տոտալ մեկ մարդու քմահաճույքին է թողնված ողջ իրավական համակարգը, այդ թվում՝ անվտանգության համակարգը: Երկրի համար մեկ մեղավորն ամեն օր սպառնում է մարդկանց: Նա է մեղավորը, որ մեր երկիրն այս վիճակում է հայտնվել, որ Արցախ է հանձնվել: Իրավապահ համակարգը փաստացի անտեսում է այդ ամենը՝ ենթարկվելով Ալիեւի կամակատարին:

- Նախօրեին մի քաղաքացու՝ ՔՊ-ի պաստառը պոկելու համար, ձերբակալել էին, ապա տարել էին հոգեբուժարան, որտեղ նա ինքնասպան է եղել: Երբվանի՞ց է պաստառ պոկելը դարձել քրեական հանցագործություն:

- Նախ, եթե մարդն ունի հոգեկան խնդիրներ, ապա պետք է պարզեին՝ հաշվառվա՞ծ է, թե՞ ոչ: Վերեւից քաղաքական պատվերներ են իջնում, դա ակնհայտ է, բայց գոնե այս պարագայում կարելի էր հաշվի առնել, որ անձն ունի հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ, ուստի պարտավոր էին ազատ արձակել, այլ ոչ թե հասցնել ինքնասպանության: Տեղի ունեցածն ուղղակի սարսափելի է եւ խիստ անազնիվ: Եթե ՔՊ-ի պաստառը պոկելու համար մարդուն կարող են ձերբակալել, ապա ինչո՞ւ, օրինակ, մանկապղծության սարսափելի դեպքն ամիսներ շարունակ կոծկվեց: Ինչո՞ւ այդ նույն իրավապահ համակարգը նման օպերատիվությամբ չէր գործում, երբ երեխաների դեմ նման հանցագործություն էր տեղի ունենում, այն պարագայում, որ այդ ամենի մասին իրավապահները տեղեկացված են եղել դեռեւս փետրվարից: Ինչպե՞ս է ստացվում, որ նման սոսկալի դեպքերը փորձում են կոծկել, իսկ ընդամենը մեկ պաստառ պոկելու համար մարդուն հասցնում են ինքնասպանության: Այստեղ տարբեր հարցեր են առաջ գալիս: Այդ ի՞նչ տեսակ ճնշումներ են գործադրել անձի նկատմամբ, որ մարդը դիմել է ինքնասպանության: Ստացվում է, որ Փաշինյանը եւ պատերազմ բերող է, եւ մարդկանց ինքնասպանության հասցնող, եւ հայ ազգին կործանող: Նա այս երկրի թիվ մեկ սպառնալիքն ու չարիքն է, որ կախվել է հայ ժողովրդի գլխին: Այս ձեւով մե՛կ Ալիեւն է հայ ազգին սպառնում, մե՛կ իր կամակատար Նիկոլ Փաշինյանը: Նրանց միջեւ չկա որեւէ տարբերություն:

ԿԱՐԾԻՔ

ՌԵԺԻՄԻ ՆՈՐ ՁԵՆՔԸ՝ ՊԱՏԺԻՉ ՀՈԳԵԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

Փաշինյանական ռեժիմն այլեւս ամենառեպրեսիվ եւ ամենատոտալիտար ռեժիմների շարքում է. այն իր քաղաքական հակառակորդներին լռեցնելու եւ ոչնչացնելու համար օգտագործում է հոգեբուժությունը, ռեժիմի բոլոր հակառակորդները կարող են հռչակվել հոգեկան հիվանդներ՝ «եթե հոգեկան հիվանդ չես, ինչո՞ւ ես մերժում Նիկոլ Փաշինյանին կամ ինչո՞ւ ես պայքարում նրա իշխանության դեմ» հիմնավորմամբ: Արտաշատի ոստիկանության կողմից կալանավորված եւ նույն օրը Նուբարաշենի հոգեբուժարանում ինքնասպանություն գործած Արմեն Հովհաննիսյանի դեպքը ռեպրեսիվ կամ պատժիչ հոգեբուժության ակնհայտ դրսեւորում է: «Պատժիչ հոգեբուժություն» տերմինը խորհրդային ծագում ունի, ստեղծել էին խորհրդային քաղկալանավորները, որով բնութագրում էին խորհրդային իշխանությունների վարքագիծը, երբ իշխանության դեմ պայքարող մարդկանց հռչակում էին հոգեկան հիվանդներ. եթե մարդը հոգեպես առողջ է, ինչո՞ւ պետք է ընդվզի իշխանության դեմ: Իրականում, լիովին առողջ, բայց ընդդիմադիր հայացքներ ունեցող մարդկանց ամենատարածված «ախտորոշումը» դանդաղ զարգացող շիզոֆրենիան էր, իսկ «բուժման» նպատակով օգտագործվում էին ցավոտ եւ թուլացնող դեղամիջոցներ, ինչպիսիք են սուլֆոզինի ներարկումները, ինչպես նաեւ՝ հակապսիխոզային դեղամիջոցների չափազանց մեծ չափաբաժինները, որոնք առաջացնում էին ծանր կողմնակի ազդեցություններ: Արդյունքում՝ անգամ ամենակայուն հոգեվիճակ ունեցող մարդուն կարող էին հաշմանդամ դարձնել:

Պատժիչ հոգեբուժությունը եղել է Նիկոլ Փաշինյանի գաղափարական հոր՝ Ադոլֆ Հիտլերի (Փաշինյանին եւ Հիտլերին միավորում է անհանդուրժողականությունը ցանկացած այլակարծության եւ ընդդիմախոսության նկատմամբ) ամենասիրելի մեթոդներից մեկը, երբ քաղաքական կամ ռասայական անհամատեղելիության պատճառով տասնյակ հազարավոր մարդկանց տեղավորում էին գազային խցիկներում եւ ֆիզիկապես ոչնչացնելով՝ լուծում խնդիրը: 19-րդ դարի վերջին, 20-ականների սկզբին Միացյալ Նահանգներում հոգեպես անառողջ էին հռչակվում բոլոր այն սեւամորթ ստրուկները, որոնք հրաժարվում էին ստրկական աշխատանքից, դեմ էին ստրկությանը եւ դրանից խուսափելու համար փորձում էին փախուստի դիմել: Նման դեպքերում օգտագործվող «բուժման» ամենատարածված ձեւը ոտքի բութ մատները կտրելն էր, որը դժվարացնում էր մարդու փախչելու հնարավորությունը:

Արմեն Հովհաննիսյանի դեպքն առայժմ եզակի է, բայց ամեն ինչ սկսվում է մեկ դեպքից, մի փորձարկումից, թե ինչպես հասարակությունը դա կընդունի, ինչպես դրան կվերաբերվի: Առաջին անգամ հնարավոր է, որ նույնիսկ ընտրեն մարդու, որն իսկապես ինչ-որ խնդիրներ ունենա, այսպես կոչված՝ նյարդերը քարից չլինեն, այն հաշվարկով, որ մարդիկ, իմանալով դրա մասին, ասեն՝ գուցե հնարավոր է, որ նրան հատուկ չեն մղել ինքնասպանության, հատուկ չեն սպանել: Ադոլֆ Հիտլերն էլ միանգամից չսկսեց առողջ մարդկանց գազային խցիկներ մտցնել. սկզբում նրա արիական ցեղատեսակի մաքրության եւ եվգենիկայի մշակումներն իրականացվեցին առողջական խնդիրներ ունեցող մարդկանց վրա, սկզբում տասնյակ հազարավոր մտավոր եւ ֆիզիկական արատներ ունեցող մարդկանց էին տանում գազային խցիկներ, հետո, երբ նրանց հարցը լուծված համարեցին, իսկ խցիկներն աշխատեցնել էր պետք, սկսեցին հավաքել հրեաներին, գնչուներին, հետո՝ կոմունիստներին, սոցիալիստներին ու բոլոր այլախոհներին:

Եթե Փաշինյանին հաջողվի վերարտադրվել, վստահ կարելի է ասել, որ Արմեն Հովհաննիսյանի ճակատագիրը կիսելու ենք շատերս: Ռեժիմը չի կարող գոյություն ունենալ իր նկատմամբ համընդհանուր ատելության եւ մերժման մթնոլորտում, Փաշինյանն ամեն ինչ անելու է, որ ատելությանը փոխարինեն վախն ու սարսափը, իսկ դա հնարավոր է միայն համընդհանուր տեռորի եւ ահաբեկչության միջոցով: Ցանկացած պատժիչ գործողություն պետք է հիմնավորված լինի, կարեւոր չէ՝ որքանով է այդ հիմնավորումն իրական կամ հորինված: Նման դեպքերում ամենատարածված հիմնավորումը թշնամուն ծախված լինելն է, այսպես կոչված, լրտեսության եւ դավաճանության մեջ մեղադրելը, ինչը եւ նա անում է՝ իր քաղաքական ընդդիմախոսներին, ընդդիմության ղեկավարներին մեղադրելով իբրեւ թե Ռուսաստանին ծառայելու մեջ: Բայց դա աշխատում է միայն ղեկավարների դեպքում, տասնյակ հազարավոր մարդկանց հնարավոր չէ մեղադրել թշնամու գործակալ լինելու մեջ, նրանց ավելի հեշտ կլինի հոգեկան հիվանդ հռչակելը եւ մեկուսացնելը:

Սրանից մի քանի ամիս առաջ ծանոթներիցս մեկը գրել էր, որ Փաշինյանն էլեկտրոնային հսկողության 4 հարյուր հազար սարք է գնել, այն սարքերից, որ անցկացնում են տնային կալանքի տակ գտնվող մարդկանց ձեռքերին կամ ոտքերին՝ նրանց տեղաշարժին հետեւելու համար: Ես այն ժամանակ դա համարեցի խիստ չափազանցություն եւ մտածեցի, որ հրապարակումը հատուկ քարոզչական

նպատակ է հետապնդում՝ ցույց տալու, թե որքան վախեցած է իշխանությունը: Հիմա, երբ տեսնում եմ, թե օրական քանի տասնյակ մարդ է ձերբակալվում եւ կալանավորվում միայն այն պատճառով, որ համարձակություն է դրսեւորել՝ արտահայտելու իր վերաբերմունքն իշխանության նկատմամբ, համոզվում եմ, որ իշխանությունը շատ ավելի լավ է տեղեկացված եղել իր նկատմամբ առկա վերաբերմունքի մասին:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՆԻԿՈԼ ԸՆՏՐԵԼՈՒ 4 ԵՐԱՆԳՆԵՐԸ

«Նիկոլին ընտրելու 4 վարիանտ կա,- այսօր ինձ բացատրեց տաքսու վարորդը,- մեկը՝ որ գնաս, իրեն ընտրես, երկրորդը՝ որ գնաս, քվեաթերթիկն անվավերացնես՝ փչացնես, երրորդը՝ որ չգնաս ընտրության, պառկես դիվանին ու սաղից զզվես: Եվ չորրորդը՝ որ ընտրես այն մանրմունր ընդդիմադիրներից որեւէ մեկին՝ ձայնդ փոշիացնես: Ես բոլոր 4 վարիանտներով ընտրում ես հենց Նիկոլին: Նիկոլին չես ընտրի, եթե քվեարկես խոշոր 3 ընդդիմադիրներից մեկի օգտին»: Մարդը մտածել էր, վերլուծել, ինքն իրեն որոշել, որ բացառելու է բոլոր հնարավոր տարբերակները, որոնք տանում են Նիկոլի հաղթանակին: Ավելի հստակ վերլուծություն ես դեռ չէի լսել:

Եվ այսպես, ըստ երեւանցի վարորդի, հիմա՝ այս քարոզարշավի 10 օրերի ընթացքում ուրվագծվում է պատկեր, որով հնարավոր է հաղթել պոպուլիզմով եւ մանիպուլյացիաներով սեւ գոտի ունեցող այս իշխանություններին: Ասում է՝ վերջին լեւելի վարպետ են՝ սուտ խոսելու, մարդկանց մոլորեցնելու հարցում նրանց գերազանցել չի լինի, քանի դեռ մարդիկ հույս չունեն, որ ընդդիմությունը հաղթանակի շանս ունի: Բայց ՔՊ-ն քարոզարշավը շատ շուտ սկսեց, ու հիմա, ելնելով ուղեւորների արձագանքից, ահավոր հոգնեցրել են: Արդեն անգիր գիտենք՝ նիկոլականներն ինչ են ասում, ու զուտ սպորտային հետաքրքրության համար սկսում ենք լսել Նարեկ Կարապետյանին, Ռոբերտ Քոչարյանին ու Գագիկ Ծառուկյանին, տեսնենք՝ իրենք ինչ են ասում:

«Մյուսներին լսելն արդեն մեծ ձեռքբերում է, քանի որ, երբ այլ ելույթներ ես լսում, հանկարծ հասկանում ես, որ ՔՊ-ի ագրեսիվ գոռգոռոցը, սպառնալիքները, լուտանքները, ստերն էլ տանելի չեն: Հասկանում ես, որ այս մարդիկ՝ ընդդիմադիրները, կարող են դրանցից մի քանի անգամ ավելի լավ երկիր ղեկավարել, ավելի արժանապատիվ եւ 100 անգամ ավելի անկեղծ են: Հույս է ծագում»,- մանրամասն բացատրեց վարորդը, ու դժվար է նրա հետ չհամաձայնելը: Այդ հույսն ընդդիմությունը պետք է փայփայի այս 20 օրերին, պետք է աճեցնի: Մեկը նոր մարդ է քաղաքականության մեջ եւ բավականին հուսադրող, մյուսը հին է, բայց զարմանալիորեն բավականին արժանահավատ: Մեջբերում եմ վարորդի բառերը. «Նիկոլը՝ ինքը, ոնց որ ամեն օր ուզենա ընտրող կորցնի: Չեմ ասում՝ իր ընտրազանգվածը կգնա, կընտրի ընդդիմությանը, չէ, բայց հիմա էլ իրենք են հոգնել ու զզվել եւ նույն դուխով ընտրության գնալու հավես չեն ունենալու: Նիկոլականներն էլ արդեն սկսեցին կասկածել ու հոգեպես դուխից ընկան՝ Նիկոլի ու իր թիմի տհաճ պահվածքի պատճառով, ու այդպիսով կպակասեն իրենց ռեալ ընտրողները: Իսկ չկողմնորոշվածները, լսելով ընդդիմության ելույթները, կկողմնորոշվեն, տեղից կշարժվեն՝ կգնան ընտրելու, ու պարզ է, որ այդ մարդիկ ոչ մի դեպքում Նիկոլ չեն ընտրելու, որովհետեւ չկողմնորոշված են ընդդիմության առումով, իսկ Նիկոլին մերժելու մասով այդ ընտրազանգվածը լավ էլ կողմնորոշված է»: Բա որ ասում եմ՝ տաքսիստ չէ, այլ՝ մի լուրջ քաղաքական մեկնաբան:

Հարցնում եմ՝ արժե՞ վիրավորանքներին վիրավորանքով պատասխանել, Քոչարյանից նման բառապաշար չէինք լսել, Նիկոլ Փաշինյանին անվանեց համբալ: Ասում է՝ հա, արժե երբեմն ցույց տալ, որ դիմացինն էլ կարող է այդ ոճով խոսել, եթե դա է այդպես դուր գալիս հասարակ ժողովրդին, հզորությունը դրա մեջ են տեսնում, ուրեմն՝ արժե: Ղարաբաղցու ասած՝ «Մենք լի ունջվար ընք, լիի», ու մենք էլ կարող ենք համբերությունը կորցնել, այդպես՝ իր նման ու իրենից լավ «հզոր» լինել: Իսկ իշխանության կողմից հնչող սպառնալիքներն ավելի են ծանրացնում իրենց վիճակը, մարդիկ չեն սիրում, որ իրենց տված ուժը ինչ-որ մեկը ինքն իրեն է վերագրում, հաստատ՝ ձեռքից այդ ուժը կառնեն՝ մերժելով ընտրություններում:

Ուրեմն, նրան հաղթելու միակ ձեւը հունիսի 7-ին ընտրությունների գնալն է եւ ընտրելը բացառապես խոշոր ընդդիմադիրներից մեկին: Խոշոր 3 ընդդիմադիր ուժերից որեւէ մեկին ընտրող մարդը պետք է վստահ լինի, որ ինքը ոչ մի կերպ ՔՊ-ի օգտին չքվեարկեց: «Ամոթ է, որ երեքով միասին մի Նիկոլ են հաղթելու, բայց չհաղթելն ավելի ամոթ է լինելու»,- ասաց վարորդը, որին ես կընտրեի վարչապետ, եթե առաջադրված լիներ ընտրություններում:

Այնպես որ, սա է ամբողջ պատկերը: Գնացեք՝ սոցիոլոգիական հարցումներ, հարցախույզներ, վերլուծություններ ու հետազոտություններ արեք, հատիկ-հատիկ մարդկանց հետ զրուցեք, աշխարհ անցեք՝ այս վերլուծությունից ուժեղ ոչինչ չեք գտնելու:

Շաքե ԱՎՈՅԱՆ

ՄԵՐԿԱՆՏԻԼՈՒԹՅՈՒՆ, ԻՆՖԱՆՏԻԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԾ ԶԱՐՄԱՆՔ. ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆՕՐՅԱԿ

2026



Քարոզարշավի առաջին 10 օրը կարելի է գնահատել որպես բացահայտման 10-օրյակ: Ընդդիմությունը, որի ակտիվությունը թողնում էր հուսալ ավելին, այսինքն՝ անբավարար էր, այս 10 օրերի ընթացքում բավականին ակտիվ ու գրագետ արշավ իրականացրեց: Պայքարի մեկնարկը հուսադրող է եւ գոհացուցիչ: Մարդիկ տեսան հստակ իր տեսակետը հայտնող, բոլոր խնդիրների շուրջ փաստարկված խոսող ու իր փաստարկներն անկեղծ հիմնավորող Ռոբերտ Քոչարյանին: Նրա կերպարը, որը նախկինում ծանրաբեռնված էր զրպարտությունների ու լեգենդների տակ, բացահայտվեց որպես պատասխանատու եւ սեփական խոսքի արժեքն իմացող փորձառու ու պատկառելի առաջնորդ: «Հայաստան» դաշինքի հետ քարոզչության մեկնած մարդիկ մոտիկից տեսան, թե որքան ազատ ու անբռնազբոս շփում կա երկրորդ նախագահի եւ իր թիմի միջեւ: Ընդ որում՝ չկա ավելորդ նյարդ: Միաժամանակ կազմակերպված են, ոչինչ չեն մոռանում, չեն սխալվում, ոչ մի տեղից ոչ մի վայրկյան չեն ուշանում: Ճշտապահությունը, անկեղծությունը, կազմակերպվածությունը շատ բնական էին՝ առանց արհեստական ճիգերի ու ձեւական պաթոսի: Նա զարմացնում է իրեն լսողներին եւ խոստանում է անակնկալ՝ ընտրություններում:

Հաջորդը. ծանոթացանք Սամվել Կարապետյանի հետ, եւ նկատելի եղավ, որ քաղաքական գործընթացներից հեռու մարդը՝ գործարար, միլիարդատեր, չէր հայտնվի քարոզարշավի մեջ, քանի որ դա լիովին խորթ է իրեն, եթե համոզված չլիներ, որ այս ճակատագրական պահին չի կարելի լռել: Կարելի է գնահատել, որ նա գործի մարդ է, ոչ թե խոսքի, եւ քարոզարշավի «խոսքային» պայքարը բնորոշ չէ նրան, ինչը հաջողությամբ հաղթահարում են նրա երիտասարդ թիմակիցներն ու հատկապես եղբորորդին՝ Նարեկ Կարապետյանը: Վերջինս բացահայտվեց որպես հավասարակշռված, գրագետ, բարի եւ լավ դաստիարակված մարդ: Նրա հետ շփումը հատկապես հուսադրող է, քանի որ չունի չարություն, գիտի իր ասելիքը, ազնիվ ու պատասխանատու երիտասարդ է երեւում՝ քաղաքականության մեջ թարմ եւ, զարմանալիորեն, համակրելի:

Մեզ զարմացնում է նաեւ Գագիկ Ծառուկյանը: Նրա կերպարում ավելացել է իմաստուն խոսքը: Նա պատասխանում է հնչող մեղադրանքներին, լրագրողների հարցերին, միշտ ունի ճիշտ պատասխան, որում չկա հիստերիա, չկա շտապողականություն եւ անհանգստություն: Գիտի իր անելիքը, չի հավակնում իշխանության, բայց պատրաստ է պատասխանատվություն կրել իր նշանակած կադրերի եւ իր երաշխավորած վարչապետի համար, որի անունը դեռ չի հրապարակում: Ծառուկյանի քարոզարշավում նկատվում է փորձառություն, խոսքն ու միտքը նույնպես հղկված են՝ անցած տարիների քարոզարշավային փորձերից:

Այսպիսին են երեք խոշոր ընդդիմադիր ուժերը: Իսկ ինչ արեց իշխանությունը 10 օրվա ընթացքում: Ինքն իր համար ոչ մի լավ բան չարեց: Կերպարը, որ արդեն ստեղծվել է՝ հիստերիկ, անհավասարակշիռ, սեփական խոսքի նկատմամբ ոչ հետեւողական, նախկինում ասածների առումով՝ անազնիվ, արժեքների առումով՝ անսկզբունքային, դրան գումարվեց տիեզերական չափի մանիպուլյացիան, որը նորություն չէ, եւ անգերազանցելի մերկանտիլությունը, որը միշտ եղել է քարոզարշավներում, բայց երբեք չի եղել այնքան տգեղ, ինչպես այսօր է: Բացատրեմ: Քարոզարշավների ընթացքում միշտ լինում են խոստումներ եւ միշտ այդ խոստումները չափազանցված են. լինի դա նպաստի, թե թոշակի ավելացում կամ որեւէ այլ սոցիալական խոստում, բոլորը տալիս են, բայց դա չեն ներկայացնում որպես իրենց միակ առավելություն, քանի որ, ի վերջո, դա պետք է արվի պետական բյուջեից, եւ դա անհատների բարեգործություն չէ: Բարեգործության խոստումներ կարող են շռայլել միլիարդատեր Կարապետյանն ու միլիոնատեր Ծառուկյանը, իսկ բյուջեից հատկացումների առումով բոլոր թեկնածուների հնարավորությունները գրեթե նույնն են: Բայց այս իշխանությունը վերջին ամիսներին ավելացրեց կենսաթոշակն ու բժշկական ապահովագրության համակարգ գործարկեց՝ ուղիղ ընտրություններից առաջ: Պետական բյուջեից արված ծախսերը, որոնք ավելի շատ ընտրակաշառքի են նման, այսօր ամեն րոպե շահարկում է, մինչդեռ մարդկանց ավելի շատ պետք է հետաքրքրեն ազգային հարցերը, գոյաբանական, ազգապահպանության թեմաները: Ցավոք, մերկանտիլությունը եւ ինֆանտիլությունն այսօր մեր հանրության մի ստվար հատվածի ամենաբնորոշ հատկանիշներն են, ու այս քարոզարշավում բացահայտվեց հենց դա: Գործող քաղաքական ուժը խորացրեց իր արդեն ստեղծած կերպարը՝ մանիպուլյացիա, հիստերիա, 7 երգ, 7-ն էլ՝ թալանի մասին, անզսպվածություն, կեղծ սեր եւ ոչ մի դրական նոտա իր կերպարին չավելացրեց, ինչ կար՝ կա, ավելի սրված ախտանիշներով: Բայց բացահայտեց իրեն համակրող մարդկանց մերկանտիլությունն ու ինֆանտիլությունը, որոնք ուղղակի զուգահեռ են աղքատության հետ:

Սա է քարոզարշավի 10 օրերի պատկերը. նոր ուժերով պայքարի դաշտ մտնող ընդդիմություն՝ չհոգնած, չգազազած, ապագայի վտանգները սթափ մատնանշող, դրանցից չվախեցող, հավասարակշիռ, չկողմնորոշված մարդկանց համար՝ բավականին հետաքրքիր: Եվ իշխանություն, որ ոչ թե քարոզչական պայքարի, այլ իսկական մարտի է ելել՝ հոգնած, գազազած, ապագայի վտանգները նենգափոխելով, դրանցով վախեցնելով, ինքն իր ապագայի համար վախեցած, անհավասարակշիռ, ամեն ինչի պատրաստ՝ հանուն իշխանության:

Շաբե ԱՎՈՅԱՆ

Իրանի հարցում միասնական չեն

ԱՄՆ նախագահ Թրամփի թիմում միասնական դիրքորոշում չկա Իրանի հարցում, չգիտեն, թե հաջորդիվ ինչ գործողությունների գնան: Թիմի մի մասը կողմ է հարվածները վերսկսելուն, մյուսներն առաջարկում են շարունակել բանակցությունները՝ հայտնում է CNN-ը: Համաձայն հաղորդման, Սպիտակ տանը Իրանի հանդեպ հետագա գործողությունների հետ կապված տարաձայնությունները խորացել են հատկապես նախագահի՝ Չինաստան այցից հետո: Վաշինգտոնում հույս ունեին, որ Պեկինում Իրանի հարցում դրական առաջընթաց կլինի, սակայն չեղավ: Երկու առաջնորդները միայն արձանագրեցին, որ Հորմուզի նեղուցը պետք է բաց լինի ազատ նավագնացության համար, իսկ Իրանն էլ երբեք միջուկային զենք չպետք է ունենա. միայն այդքանը: Սպիտակ տան խորհրդականների մի մասը եւ Պենտագոնի ներկայացուցիչները կողմ են, որ Թեհրանի հանդեպ կոշտ վերաբերմունք որդեգրվի, հարվածները վերսկսվեն: Մյուսները կարծում են, որ, հակառակը՝ Վաշինգտոնը պետք է շարունակի Իրանի հետ բանակցությունները: Թրամփն անձամբ դժգոհ է Հորմուզի նեղուցի շարունակվող արգելափակումից, որի պատճառով ԱՄՆ-ում թանկանում են նավթն ու բենզինը: Նա բոլոր տարբերակներն էլ դիտարկում է, սակայն նախընտրում է դիվանագիտությունը՝ ռազմական գործողությունները թողնելով որպես ծայրահեղ միջոց: The New York Times-ն էլ գրում է, որ ԱՄՆ-ն ու Իսրայելը սկսել են ավելի եռանդուն նախապատրաստվել Իրանի դեմ նոր ռազմական գործողությանը: Խորհրդականները Թրամփին մի քանի տարբերակ են առաջարկել՝ Իրանի դեմ ռազմական հարձակման առաջնահերթ թիրախներ:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2018-ԻՆ ԲԱԳՐԱՏ ՍՐԲԱԶԱՆԻՆ ԱՌԱՋԱՐԿԵԼ ԷԻՆ ԸՆԴԳՐԿՎԵԼ ԻՐԵՆՑ ՅՈՒՅԱԿՈՒՄ

Մայիսի 16-ին Վեհափառ հայրապետն Էջմիածնում ընդունել էր մի մեծ խումբ մտավորականների: Նրանց թվում էր նաեւ ռեժիսոր, իրավապաշտպան **Հովհաննես Իշխանյանը**: «Հրապարակի» հետ զրույցում Իշխանյանն ասաց, որ հանդիպումը լավ առիթ էր՝ իրենց մտահոգություններն ու հարցերը Վեհափառին ներկայացնելու համար: «Այն, ինչ կատարվում է Հայաստանում, այս սահմանադրախախտները, որ ռասիստական ոտնձգություններ են իրականացնում Եկեղեցու դեմ՝ Սահմանադրությունը խախտելով, միջամտելով Եկեղեցու կյանքին, հիմա էլ նախընտրական ծրագրում խոստացել են Սահմանադրությունը խախտել՝ կաթողիկոսին հեռացնելով: Այսինքն, անհրաժեշտ է, որ բոլոր շերտերը Հայաստանում աջակցեն Եկեղեցուն, որովհետեւ հիմա կաթողիկոսին աջակցելը նույնն է, ինչ ժողովրդավարությանն ես աջակցում, Սահմանադրությանը, միջազգային իրավունքին, ինչպես նաեւ՝ հայերի ինքնությանը: Այս պահին այս բոլոր երեւույթները փոխկապակցված են միմյանց հետ»,- ասաց Իշխանյանը:

Քաղաքական իրավիճակի, սպասվող ընտրությունների մասին զրուցե՞լ եք: Պատասխանեց, որ քննարկման ժամանակ մի քանի անգամ շեշտվել է, որ Եկեղեցին քաղաքականությանը չի խառնվում: «Ըստ ինձ հասած տեղեկությունների, Նիկոլ Փաշինյանը Բագրատ սրբազանին առաջարկել է՝ 2018 թվականին իրենց ցուցակում ընդգրկվել՝ «Իմ քայլի», ու, իմ ունեցած տեղեկություններով, Եկեղեցու դիրքորոշումը հետեւյալն է եղել՝ որ քաղաքականության մեջ չի խառնվելու: Եթե այդ տեղեկությունները ճիշտ են, փաստորեն, հիմա սրանք մեղադրում են Եկեղեցուն մի բանի մեջ, որն իրենք են հենց առաջարկել ժամանակին, իսկ հիմա Եկեղեցին պարզապես չի կարող իր քաղաքական կեցվածքը ցույց չտալ, որովհետեւ, իմ կարծիքով, վերացնում են հայկական մշակութային ժառանգությունը, եկեղեցիները, Հայ առաքելական եկեղեցու հետեւորդների հանդեպ էթնիկ զտում են անում, ո՞նց եք պատկերացնում, որ Եկեղեցին իր դիրքորոշումը չունենա այս հարցում: Արցախի մի ամբողջ թեմ են վերացրել, բնականաբար, պիտի իր դիրքորոշումն ունենա, հո բանջարեղեն չէ՞, որ դիրքորոշում չունենա: Բնականաբար, ունի իր հստակ դիրքորոշումն ու արտահայտում է եւ շատ լավ է անում»,- շեշտում է մեր զրուցակիցը:

Եկեղեցու սպասավորները կարող են իրենց քաղաքական դիրքորոշումն ունենալ, եւ դա ապահովում է «Կրոնի մասին» օրենքը. 18-րդ հոդվածում հստակ ու պարզ գրված է, որ կրոնական կազմակերպությունների սպասավորները բոլոր քաղաքացիներին համահավասար կարող են մասնակցել քաղաքական կյանքին՝ հիշեցնում է Իշխանյանը: Եվ հենց դա է պատճառը, որ այս իշխանությունները, ի դեմս Եկեղեցու, ուզում են կառավարելի դարձնել, ադրբեջանական կառավարելի ինչ-որ կառույց դարձնել Եկեղեցին, որը մեր իրավունքների, այդ թվում՝ իրենց իրավունքների պաշտպանության հարց չհնչեցնի: Հատկանշական է, որ այդ հանդիպման ժամանակ մշակույթի որոշ գործիչներ շնորհակալություն են հայտնել Ամենայն հայոց հայրապետին՝ Եկեղեցու որդեգրած դիրքորոշման համար. «Խոսք եղավ, որ հենց Եկեղեցին է, որ խաղաղություն է բերում, որովհետեւ Եկեղեցու այդ կեցվածքը խաղաղություն է փոխանցում բոլորիս»: Իշխանյանը հավելեց, որ մշակույթի գործիչներն առանձնահատուկ վերաբերմունք ունեն Եկեղեցու կողքին լինելու հարցում, որովհետեւ Եկեղեցին սերնդեսերունդ լավագույնս փոխանցել է հայկական մշակույթը:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՑԱՅՆԵՆ

ԵԹԵ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՆՔ ԵՐԱԶՈՒՄ, ՊԵՏՔ Է ԱԶԱՏՎԵՆՔ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ ԲԵՐԱԾ ԱՅՍ ԽՄԲԱԿԻՑ

«Հրապարակի» զրուցակիցը ուսուցչուհի **Հասմիկ Հարությունյանն** է:

- Նիկոլ Փաշինյանը, 2017-ին խոսելով խաղաղության մասին, ասում էր, որ դրանք կապիտուլյացիայի մասին խոսակցություններ են: Եթե որեւէ պետություն ուզում է խաղաղություն, պետք է պատրաստ լինի պատերազմի: Այժմ ասում է՝ մենք խաղաղություն ենք բերել, տեր կանգնեք խաղաղությանը: Ի՞նչ խաղաղության մասին է խոսքը:

- Նիկոլ Փաշինյանին՝ որպես լրագրողի եւ մարդու, ճանաչում ու հետեւում եմ շատ վաղուց, իր՝ մամուլի աշխարհում երեւալու առաջին փորձերից: Նրա ասածներն ու արածները միշտ էլ «փայլել» են անհամապատասխանությամբ, անգամ՝ ծայրահեղ հակադրությամբ: Իսկ նա «փայլել» է մանիպուլյացիայի վարպետությամբ: Դարձել է պետության ղեկավար հենց այդ պատճառով: Նրա այդ «շնորհքին» տերերն ավելացրել են ժամանակակից տեխնոլոգիաներով առաջնորդվելու ձեւերն ու մեթոդները, որոնք, ընկնելով պարարտ հողի մեջ, մի ուրիշ ձեւով ծլեցին ու ծաղկեցին: Կարո՞ղ եք հիշել մի հարց, որին նա կամ իր հայտնի թիմակիցներն ուղիղ են պատասխանել: Չեք հիշի, չեն ցանկացել պատասխանել, քանի որ դրսից պատժվելու, աթոռից զրկվելու ահից սարսափած՝ դիմում են մարդկանց մոլորեցնելու իրենց այնքան մատչելի մեթոդին: Սկզբում դա նրանց հաջողվում էր, հիմա՝ ոչ: Ամեն ինչ պարզ է, դիմակները՝ պատռված, հիստերիկ ճղճղոցները, ձանձրացնող կրկնությունները՝ անհեթեթ ու աննպատակ: Մնացել է միայն կախարդական մեկ բառ՝ խաղաղություն, որն արյունարբու պատերազմների ֆոնին իրականության ձգտող երազանք է: Հազարավոր զոհեր տված մեր ժողովրդի համար այն ոչ միայն բաղձալի է, այլեւ կարող է սփոփանք լինել տառապած սրտերի համար, բայց «հալվա, հալվա ասելով՝ բերանդ չի քաղցրանա»,- ասում է արեւելյան առածը: Միակողմանի խաղաղություն որտե՞ղ եք տեսել: Կռված հարեւաններից եթե մեկն է միայն ուզում հաշտվել, այն չի կայանում: Մենք հիմա խաղալիք ենք մեր հարեւան բորենիների թաթերի մեջ, բոլոր ուղղություններով գրոհում են, իսկ իշխանությունը, ցայտնոտի մեջ, ռոբոտի նման կրկնում է «խաղաղություն» բառը: Ինչի՞ հիման վրա են հայտարարում խաղաղության մասին, կամ փաստաթուղթ: Չկա՛: Որքան բարձր են գոռում խաղաղություն, այնքան պարզ է դառնում, որ խաբում են: Առաջին հերթին երեւի իրենց են համոզում, բայց դա էլ չի ստացվում: Իսկ եթե խաղաղություն ենք երազում, ապա առաջին հերթին պետք է ազատվենք պարտերազմներ, զոհեր, կորուստներ բերած, ողջ աշխարհում մեր պատիվն ու արժանապատվությունը հողին հավասարեցրած այս խմբակից:

- Ալիեւը պարբերաբար խոսում է 300 հազար ադրբեջանցիների վերադարձի մասին: Ի՞նչ եք կարծում՝ ՔՊ-ի վերընտրվելու դեպքում սա իրականություն կդառնա՞:

- Նախ, պիտի հարցնեիք՝ ինչպիսի՞ն պետք է լինի պետության ղեկավարը: Եվ ես սրտի ցավով կպատասխանեի՝ հարեւան թշնամի երկրի նախագահի նման: Հակընդդեմ հարց տամ՝ իսկ Ադրբեջանից մազապուրծ փախած, այդ երկիրը կառուցած, տունուտեղը թուրքին թողածներին վերադարձ չկա՞: Արցախից եկածներին վերադարձ չկա՞: Այդքան միակողմանի զիջում լինո՞ւմ է: 300 հազարը փոքր թիվ չէ, բայց նրանք տոհմերով են գալու՝ 10-12 երեխաներով: Գալու են վստահ, որ տեղավորվելու են, բնակարան են ստանալու Երեւանում: Այլապես ո՞ւմ համար են կառուցում սնկի պես աճող բարձրահարկերը, որոնք կիսադատարկ, սեւ ակնախոռոչ հիշեցնող պատուհաններով սպասում են հունիսի 7-ին: Համոզված եմ, այդ շենքերում ապրող հատուկենտ բնակիչներն էլ կփախչեն թուրքի հարեւանությունից: Հիմա ինչպիսի՞ ղեկավար է Փաշինյանը, ո՞ւմ մասին է մտածում՝ ի՞ր քաղաքացու, թե՞ 300 հազար ադրբեջանցու: Ո՞ւմ վարչապետն է լինելու հունիսի 7-ից հետո, եթե ընտրվի: Ընտրվելուց հետո տերերը թույլ կտա՞ն, որ աշխատի, թե՞ նա եւ իր թիմը, իրենց սեւ գործը կատարած լինելով, կհեռացվեն: Հունիսի 7-ը մեր արժանապատվությունն ու պատիվը, հող հայրենին, մեր սուրբ օջախները, մեր պատմությունն ու գանձերը փրկելու օրն է:

- Ինչո՞ւ է Փաշինյանը պայքարում Արարատ լեռան, Հայ առաքելական եկեղեցու դեմ:

- Թե ինչու է պայքարում մեր ազգային արժեքների դեմ, չեմ կարող ասել: Անձնական պատճառները, թվում է, պարզ չեն, այնինչ նրա անսահման ատելությունը ՀԱԵ-ի ու հայկականության նկատմամբ կուրացրել է նրան այնքան, որ բացահայտ պայքար է մղում՝ օգտագործելով փողոցային բառապաշար ու հայհոյանք: Այս մարդը սրբություն չունի: Եթե Փաշինյանն ու իր թիմը կռվում են ոգեղենի դեմ, Եկեղեցին չէր կարող դուրս մնալ նրանց թիրախների ցուցակից: ՀԱԵ՝ ահա նրանց եւ նրանց տերերի գլխավոր թշմամին եւ սարսափը: Նրանց կպատասխանի մեծ հայրենասերը՝ Խաչատուր Աբովյանը. «Էդ ո՞ւմ վրա եք թուր հանել, հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում»: Ժամանակավոր են որոշումները եւ որոշումներ կայացնողները: Հուսահատ խեղդվողի՝ ձեռքը փրփուրներին գցելու նման է: Իրենք էլ գիտեն, որ իրենց ժամանակը սպառվել է, գալու է պատասխան տալու ժամանակը: Նրանք վախենում են հատուցման պահանջից, գիտեն, որ չկա վաղեմության ժամկետ: Եթե նույնիսկ 1 հայ մնա աշխարհում, հենց նա է լինելու Հայաստանի, Արարատի եւ այն ամենի պահանջատերը, ինչն արդեն քանի դար է՝ խլում են մեզնից, փորձում են ջնջել, ոչնչացնել, մոխրացնել: Փաշինյանն ու բոլոր ՔՊ-ականները գործիք են դարձել թշնամու ձեռքին (կամավոր թե ստիպված) ու բոլոր միջոցներով գնում են սրբությունների, խորհրդանիշների, հիշողության ոչնչացման: Ծիծաղելի է: Հազարամյակների ստեղծածը մի հիմար որոշումով չես կարող ջնջել: Ես առաջարկություն ունեմ՝ եթե չեն սիրում Արարատը, թող Արարատին նայող իրենց պատուհանները պատով փակեն, անթափանց վարագույր կախեն, բայց հային չեն կարող արգելել նայել իր պատմության ամենահզոր ականատես վկային, հիանալ նրա վեհությամբ, օրինակ վերցնել նրա հավերժականությունից: Արարատը տեսանելի է աշխարհի բոլոր կողմերից՝ ամեն հայի համար: Ահա՛ իմ պատասխանը Փաշինյանին.

Կուզեի նստել մի քարի վրա
Եվ անվերջ նայել իմ Արարատին,
Հարբել հայրենի միրաժով նրա
Եվ հավերժ նայել իմ Արարատին:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼԸ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՉԷ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑ Է

Մի խումբ հայ մտավորականներ մայիսի 16-ին հյուրընկալվել էին Մայր Աթոռում՝ Վեհափառի հետ հանդիպման: Նրանց թվում էր նաեւ պատերազմի հերոս Վարդան Ամալյանի հայրը՝ երգիչ, երգահան **Դավիթ Ամալյանը**: Մենք նրա հետ զրուցեցինք հանդիպման վերաբերյալ:

- Հանդիպել եք Վեհափառին. հանդիպումն ո՞ւմ նախաձեռնությամբ էր:

- Հանդիպումը կազմակերպվել էր Վեհափառի կողքին լինելու, նրան տեսնելու համար: Հանդիպումը բոլորիս նախաձեռնությամբ եւ համաձայնությամբ տեղի ունեցավ, ուղղակի ադմինիստրատիվ մասը Ժիրայր Դադասյանն էր կազմակերպել:

- Ի՞նչը պատճառ դարձավ, որ որոշեցիք հանդիպել Վեհափառին, ի՞նչ հարցեր եք քննարկել:

- Մտերմության եւ երկրի փրկության հարցը, ուրիշ ոչ մի բան չեմ ասի, համենայնդեպս, քաղաքականություն չի քննարկվել: Այդ հարաբերության մեջ քաղաքականությունը շատ փոքր է՝ ազգային հարց լուծելը քաղաքականություն չէ:

- Այսինքն, զրույցի թեման այս իրավիճակից դուրս գալու լուծումներ փնտրելն ու առաջարկելն է եղել:

- Իհարկե:

- Շուտով խորհրդարանական ընտրություններ են, ու որքան էլ ասեք, թե քաղաքականության հետ կապված հարց չեք քննարկել, մարդկանց մոտ հարցեր են առաջանալու այդ առնչությամբ:

- Միանշանակ, խաղաղ լուծումների մասին է խոսքը, եւ խուսափել բախումներից:

- Ընդդիմության, Եկեղեցու հետ կապված՝ դա հասկանալի է, բայց իշխանությունը, ինչպես շատ փորձագետներ են ասում, զգալով իր խոցելի վիճակը, կարող է տանել բախումների:

- Բախումների տանելու համար իշխանության խելքն իրենը չէ, հենց այսօր չտեսա՞ք, թե առավոտվանից ինչեր է ասել, արել, տեսնում եմ, վատանում եմ:

- Իսկ դրան դիմակայելու հնարավորություն կա՞: Քննարկե՞լ եք այդ սցենարները:

- Պատկերացնո՞ւմ եք՝ Վեհափառի հետ քննարկել, թե ինչպես դիմակայել, ենթադրենք, ագրեսիվ տրամադրված ամբոխին: Ավելի մարդկային արժեքներից ենք խոսել, իսկ այդ ամբոխի մասին Վեհափառի մոտ... ափսոս էլ է այդ ժամանակը իրենց մասին խոսել:

- Ինչպե՞ս եք գնահատում այդ քննարկումը եւ ի՞նչ առանձնահատուկ հանգամանք կնշեք:

- Քննարկումը՝ հրաշալի: Վեհափառի ուժն իր անհատական, իր տղայական, իր մարդկային եւ հոգեւոր ուժն է:

- Այդ հանդիպմանը մասնակցող մտավորականների մեջ կա՞յին ապաքաղաքական, տարբեր ընդդիմադիր ուժերի համակրող մտավորականներ, զրույցի ժամանակ նկատվեցի՞ն այդ դրսեւորումները:

- Ոչ մի դրսեւորում չկար: Առավել եւս՝ մշակույթի գործչի համար իշխանության դեմ պայքարելը քաղաքականություն չէ:

- Գոյության, ապրելու իրավունքի՞ պայքար է:

- Այո, պետության գոյության, նաեւ՝ ազգային արժեքների:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՎԵՐԸՆՏՐՎԵԼՆ ԱՂԵՏԱԼԻ ԿԼԻՆԻ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

«Հրապարակի» զրուցակիցն է «Սփյուռք» հանդեսի (Լիբանան) գլխավոր խմբագիր **Սագօ Օգնայեանը**: Զրույցը սկսեցինք Լիբանանում տիրող իրավիճակին անդրադարձով:

- Ի՞նչ զարգացումներ կան Լիբանանում, եւ Լիբանանի իրավիճակն ի՞նչ նմանություններ ունի Հայաստանի հետ:

- Լիբանանում տեղի ունեցածը հիմա նույնությամբ կրկնվում է Հայաստանում: Լիբանանը մշտապես պատերազմների մեջ է եղել: Լիբանանի ղեկավարության փտածությունն ու կաշառակերությունը, նաեւ Արեւմուտքի՝ հատկապես Ամերիկայի կողմից օգնությունների եւ ներդրումների դադարեցումը երկիրը հասցրել են անդունդի եւ տնտեսական սնանկության: Պետությունն անկարող է ժողովրդին ապահովել էլեկտրականությամբ, ջրով, մարդկային հիմնական պահանջների՝ առողջապահական, ապահովական եւ ապահովագրական ծառայություններով: Այս ամենին ավելացել են նաեւ Իսրայելի իրականացրած կործանարար եւ անմարդկային հարձակումները: Լիբանանը չունի հումք եւ ծանր արդյունաբերություն, այլ հենվում է միայն հանրային սպասարկման՝ ռեստորանների, հյուրանոցների, մշակութային կենտրոնների, ինչպես նաեւ՝ զբոսաշրջության վրա: Իսկ երբ երկիրն անապահով է, այս երկուսն էլ չեն գործում, ինչի հետեւանքով աճում են գործազրկությունն ու աղքատությունը, եւ դա հանգեցնում է հանցագործությունների թվի աճին: Լիբանանի եւ Սիրիայի ժողովուրդների մասը կազմող հայերն էլ, մյուսների նման, կրում են նույն սոցիալական եւ տնտեսական դժվարությունները: Արտագաղթն արագացել է դեպի Ամերիկա եւ Հայաստան: Իր բազմադավան կառուցվածքն ու հարավային սահմանին Իսրայելի գոյությունը Լիբանանին մշտապես պահում են անկայուն իրավիճակի մեջ: Իսրայելի կողմից փորձ է արվում շահարկել ներքին պառակտումները՝ քաղաքացիական պատերազմ հրահրելով: Հանրապետության եւ խորհրդարանի նախագահները փորձում են պահպանել որոշակի հավասարակշռություն, որպեսզի չկրկնվի 1975 թ. իրավիճակը, որը տեւեց 15 տարի: Այնտեղ տեսնում ենք ամենահզոր ուժին՝ «Հըզբոլլահին», որը ստեղծվել է որպես դիմադրական ուժ՝ ընդդեմ Իսրայելի օկուպացիայի, եւ մշտապես հակազդել ու կանխել է ներքին բախումները:

Լիբանանի բանկերը սնանկացել են, մնացել է միայն բանակը: Վերջերս, Իսրայելի եւ Ամերիկայի ճնշմամբ, փորձեր արվեցին բանակը հանել «Հըզբոլլահի» դեմ, սակայն չհաջողեցին: «Հըզբոլլահի» անդամներից մեկը պատմում է. «Երբ Լիբանանի բանակի հրետանու գնդապետը զինվորին հրամայում է ռմբակոծել Բեյրութի արվարձանը, զինվորը հրաժարվում է, քանի որ իր ընտանիքն այնտեղ է ապրում: Գնդապետը զենքով սպառնում է զինվորին եւ կրակում նրա վրա, զինվորն էլ պատասխանում է: Այսպես էլ է լինում»:

- Վերադառնանք հայկական իրականություն: Ինչպե՞ս եք հեռվից գնահատում ՀՀ ներքաղաքական կյանքը, ինչպե՞ս եք վերաբերվում Նիկոլ Փաշինյանին, ո՞ւր է նա մեզ տանում՝ դեպի փրկությո՞ւն, թե՞ կործանում:

- Հայաստանի իրականությունը շատ չի տարբերվում Լիբանանից: Անկախացումից ի վեր, Լիբանանի նման, շեշտը դրվեց սպասարկման, զբոսաշրջության եւ հատկապես առեւտրի վրա: Մինչդեռ Հայաստանը, ունենալով հանքային հումք, ջրի առատություն եւ արդյունաբերությունը զարգացնելու հնարավորություն, չօգտագործեց դրանք Հայաստանի շահերի համար: Ցանկացան արագ փող աշխատել եւ հեռուն չմտածեցին: Հայաստանի առավելությունն այն է, որ այն կազմված է հայությունից: Եթե Փաշինյանը վերընտրվի, մեր երկիրը կլցվի թուրք-ազերիներով: Հայաստանը, Լիբանանի նման, մտել է փտածության այնպիսի շրջանակի մեջ, որտեղ պետական բարձրաստիճան պաշտոնյայից մինչեւ ամենափոքր պաշտոնյան զբաղված է կաշառակերությամբ: Փաշինյանն օգտագործեց այս հանգամանքը, որպեսզի գա իշխանության, սակայն ինքն էլ ընկավ նույն շրջապտույտի մեջ, եւ կաշառակերությունն ու փտածությունը սկսեցին գործել այլ ձեւերով: Տնտեսական համակարգի քայքայումը սկսվում է վարկեր վերցնելուց, որոնց նպատակը ոչ թե երկրին օգտակար լինելն է, այլ նրան օտարի ազդեցության տակ դնելը: Լիբանանի բանակը դիմանում է, եւ նրա նշանաբաններից առաջինը՝ «արժանապատվություն, զոհաբերություն, հավատարմություն», համարվում է հիմնականը, մինչդեռ Հայաստանի բանակը Փաշինյանի օրոք զրկվեց իր արժանապատվությունից եւ բարոյալքվեց, որովհետեւ նա թուլացրեց այն: Փաշինյանն իր անհեռատես զիջումներով կարծում է, թե հեռացնում է պատերազմը՝ ժողովրդին խաբելով, թե խաղաղություն է բերում: Սակայն Ալիեւի հռետորաբանությունից եւ նրա բանակի պատրաստվածությունից հետեւում է, որ պատերազմի վտանգը կախված է մեր գլխին: Փաշինյանը չկարողացավ կառավարել երկիրը եւ այն, ռուսական ազդեցությունից դուրս բերելու ցանկությամբ, կապեց Արեւմուտքին ու հատկապես՝ թուրք-ադրբեջանական շահերին:

Ժողովրդավարական երկիրն այն է, որտեղ խորհրդարանը, կառավարությունն ու դատական համակարգը պետք է գործեն միմյանցից անկախ: Այսինքն՝ մեկը չպետք է միջամտի մյուսի գործերին, հակառակ դեպքում համակարգը վերածվում է բռնապետության: Փաշինյանն ամեն ինչ վերցրեց իր ձեռքը եւ սկսեց սանձարձակ կերպով գործել՝ սուտ մեղադրանքներով ու զրպարտություններով ձերբակալելով ընդդիմադիրներին: Եկեղեցականներին սկսեց հալածել, արգելել ամեն ինչ, որպեսզի չնեղացնի Թուրքիային եւ Ադրբեջանին: Հայաստանը չունեցավ իր ապահով ապագան տնօրինող եւ իրականացնող կառույց: Փաշինյանի վերընտրվելն աղետալի կլինի համայն հայության համար, որովհետեւ նա իր օրակարգն իրականացնում է Թուրքիայի եւ Ադրբեջանի պետական շահերից ելնելով: Ամերիկաբնակ լիբանանցի փիլիսոփա Խալիլ Ջիբրանն ասել է. «Ճշմարտությունը կարող է մերկ քայլել, բայց սուտը միշտ հագնված պետք է լինի»: Փաշինյանը մի սուտ է խոսում՝ ժողովրդին շահելու համար, եւ այդ սուտը ծածկելու համար մեկ այլ սուտ էլ է ասում: Իսկ վերջում, երբ այլեւս չի կարողանում գլուխ հանել, սկսում է դատարկախոսել: Գիտենք, որ քաղաքականությունը մաքուր գործ չէ, սակայն մյս աստիճան:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 19.05.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՉԼԻՆԵՆ ԱՅՍ ՍԱՄՎԵԼՆ ՈՒ ՌՈԲԵՐՏԸ, ԿԼԻՆԵՆ ՈՒՐԻՇ ՍԱՄՎԵԼՆԵՐ ՈՒ ՌՈԲԵՐՏՆԵՐ

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Նիկոլի եւ նիկոլենց նախընտրական խոսույթն ու նրանց քարոզչական թեզերն ապացուցում են, որ այս մարդիկ ոչ միայն երկիր ու պետություն կառավարելուց, այլ նաեւ նախընտրական քարոզչություն ու ընտրություն կազմակերպելուց չեն հասկանում:

Չեն հասկանում, որովհետեւ, եթե հասկանային, ապա կհասկանային նաեւ, որ իրենց դեմ այսօր ո՛չ Սամվել Կարապետյանը, ո՛չ Ռոբերտ Քոչարյանը, ո՛չ էլ Գագիկ Ծառուկյանն ու Էդմոն Մարուքյանը չեն: Կհասկանային, որ եթե չլինեն այս Սամվելն ու այս Ռոբերտը, կլինեն ուրիշ սամվելներ ու ուրիշ ռոբերտներ, չլինեն այս Գագոն ու այս Էդմոնը, կլինեն ուրիշ գագոներ ու ուրիշ էդմոններ, որոնք ամեն ինչ կանեն իրենց հեռացնելու՝ երկիրն իրենցից ազատելու համար:

Այն, որ սրանք ո՛չ պետությունից ու պետություն կառավարելուց, ո՛չ ընտրությունից ու ընտրություն կազմակերպելուց չեն հասկանում, երեւում է նաեւ նրանից, որ սրանք անգամ այսքանից հետո էլ չեն հասկանում, որ իրենց նկատմամբ գեներացված այսօրվա ներհասարակական անվստահության ու ատելության մեղավորը ո՛չ Սամվելը, ո՛չ Ռոբերտը, ո՛չ Գագոն եւ ո՛չ էլ Էդմոնը չեն: Իրենց նկատմամբ գեներացված այսօրվա անվստահության ու ատելության միակ մեղավորն իրենք ու ութնամյա իրենց կառավարումն է:

Սակայն սրանք միայն դա չէ, որ չեն հասկանում: Սրանք չեն հասկանում նաեւ, որ իրենց հեռանալու կամ իրենց մնալու հարցն այլեւս ոչ թե իրենցից, այլ Հայաստանի քաղաքացու՝ իրենց նկատմամբ ձեւավորված վերաբերմունքից է կախված: Իսկ այդ վերաբերմունքն այսօր ո՛չ 2018-ի էյֆորիայի եւ ո՛չ էլ «թավշյա հեղափոխության», ո՛չ նախկինների թալանի եւ ո՛չ էլ «թալանածը հետ կբերենք»-ի մասին չէ: Իրենց նկատմամբ հասարակության այսօրվա վերաբերմունքն իրենց հեռացնելու՝ երկիրն իրենցից ազատագրելու մասին է:

Հետեւությունը մեկն է: Հունիսի 7-ին իրենք պետք է հեռանան: Պետք է հեռանան, որովհետեւ եթե չհեռանան, ապա ստիպված կլինեն հեռանալ օգոստոսի 8-ին, եթե չհեռանան օգոստոսի 8-ին, ստիպված կլինեն հեռանալ սեպտեմբերի 1-ին, եթե չհեռանան սեպտեմբերի 1-ին, ստիպված կլինեն հեռանալ նոյեմբերի 10-ին, ու այսպես շարունակ:

Այս իմաստով, միակ բանը, ինչն իրենք չեն կարող անել, դեմոկրատական ընտրություններ չանցկացնելն է, այդ ընտրություններում ֆիքսված ժողովրդի կամքն անտեսելն է, ներհասարակական ընդվզում հրահրելն ու երկիրը քաոսի մատնելն է: Այլ խոսքով, խնդիրն այն է, որ դեռ չեն հասկացել, որ իրենց «ժամանակն անցել է»:

Հուսանք, որ իրենց կառավարման 8 տարիների այս համընդհանուր ձախողման ֆոնին այս իշխանություններն այսքանը հասկանալու կարողություն, այնուամենայնիվ, ձեռք են բերել:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am